

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

**ԳԻՏԱԿՑԵԼՈՎ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
 ԳԱՂՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ
 ՈՒ ՊԱՏԳԱՄԻՆ**

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ինչպես անցնող տասնընկուց տարիներում՝ նույնպես եւ այս օրերում, ազգային մեծ ուրախութեամբ, հպարտութեամբ եւ հոգեպէս լիցֆաւորում կը տօնախմբենք մեր հայրենիքի անկախութեան յաղթական տասնըվեցերորդ տարեդարձը:

Մեր ազգի գոյութեան աւելի քան երեք հազարամեայ պատմութեան մէջ – բոլոր փոփոխումները – մեծ է եղած թիւը մեր սրտերը արբեցնող եւ լիցֆաւորող հսկայական նուիրագործումներու տարեթիւերը, որոնք կը վկայակոչեն մեր ժողովուրդի մշակութային, գեղարուեստական, երաժշտական, գիտական, մարտարարական, գաղափարախօսական, ազատագրական եւ քաղաքական շնորհիմները, բնութագրող արժանիքները:

Նույնպէս, մեծ է եղած մեր պատմութեան սեւ էջերու տարեթիւերը, որոնք ամէն տարի դառնութեամբ, ափսոսանքով եւ պահանջատիրական ոգիով կ'ոգեկոչենք ազգովին:

Այդ բոլոր տօնախմբուող, ոգեկոչող եւ կամ պահանջատիրական տարեթիւերը, ինքնուրուիկութեամբ խարսխուած մնացին անկախ հայրենիքի ունենալու դարաւոր սուրբ երազի պատուանդանին վրայ:

Այն ինչ որ հազարամեակներ, մեր ազգի արժանաւոր գաւակները, պարզ մարդէն մինչեւ տաղանդաւոր քաղաքականներն ու ջուրհակները բերին, այն ինչ որ մեր համարաւոր գիտնականներն ու մեծաշնորհ մարտարարները կերտեցին. այն ինչ որ մեր գիր ու գրականութեան եւ գեղարուեստի երանաւէտ երդուեալ մեծատաղանդները երկնեցին, այն ինչ որ նուիրարներեցին հայկերէրը, ազատամարտիկը, բոլորը, բոլորը՝ տաշեցին, հիւսեցին, մեարդեցան շունչով գիտարարեցին, կոթողեցին,

Շար.ը էջ 5

ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆԿԱՏԵՑԻՆ ԽՈՍՏԱՆԱԼԻՑ

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի հետ Ստեփանակերտի մէջ իրենց ունեցած հանդիպումէն ետք, **ԵԱՀԿ Մինսկի խումբի** համանախագահները Սեպտեմբեր 17-ին Երեւանի մէջ յայտարարեցին, որ այսօրուայ դրութեամբ Լեւոնային Ղարաբաղը անուղղակիօրէն է որ կը մասնակցի ԼՂՀ տագնապի կարգաւորման ձգտող բանակցութիւններուն, բայց օր մը ան ուղղակիօրէն կը մասնակցի անոնց՝ դառնալով բանակցային կողմ:



Ձախէն աջ՝ Մէքիմ Պրայզա, Պեռնար Ֆասիէ եւ Եւրի Մերգլեանով

Ամերիկացի համանախագահ Մէքիմ Պրայզա հերքեց, թէ ինքն ըսած է, որ բանակցային ֆորմատը երբեք չի փոխուիր, իսկ ֆրանսացի համանախագահ Պեռնար Ֆասիէ պարզաբանեց, որ ԼՂՀ-ի մէջ Պրայզայի կատարած այդ յայտարարութիւնը, որ ան ըրած է բոլոր համանախագահներու անունով, կը

վերաբերէր ոչ թէ բանակցային ֆորմատին, այլ ԵԱՀԿ Մինսկի խումբի ձեւաչափին: «Իսկ այս ձեւաչափի փոփոխման մասին խօսք չկայ», - վստահեցուցին համանախագահները: «ՄԱԿ կամ այլ ատեան խնդրի կարգաւորման հարցը տեղափոխելու համար անհրաժեշտ է նախեւառաջ կողմերու

Շար.ը էջ 4

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՀԱԼԱԾԵՆ ԱՐԴԱՐԱՄԻՑ ԴԱՏԱԴՈՐԻՆ ՊԱՐԳԵՒ ՕՐԱՆԵԱՆ. «ԿԱՏԱՐԵՑԻ ԻՄ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՉԵՄ ԶՂՋՈՒՄ»

«Ռոնալ Արմենիա» ընկերութեան գործով անցեալ Յուլիսին արդարացման վճիռ արձակած Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու առաջին ատեանի դատարանի դատաւոր Պարգեւ Օհանեանի նկատմամբ Հայաստանի իշխանութիւնները ձեռնարկած են կարգապահական միջոցներ:



Դատաւոր Պարգեւ Օհանեանը չունենալով դրա համար, կարելի է ասել, ոչ մի հոգեւոր աջակցութիւն», - ըսաւ Պարգեւ Օհանեանի շարունակելով. - «Այո, կատարեցի այդ ընտրութիւնը ու չեմ զղջում»:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի մը ընթացքին դատաւոր Օհանեան ըսած է, որ կատարած է իր ընտրութիւնը, որուն համար համար չի զղջար:

«Այդ գործը ստիպեց ինձ այլ աչքով նայել ինքս ինձ, իմ գործին, իմ խղճին: Ստիպուած եղայ ընտրութիւն կատարել... Կամ պէտք է ես անարդար դատավճիռ կայացնէի եւ մարդկանց դատապարտէի բաւականին խիստ պատիժներով, եւ կամ, իհարկէ, պէտք է իրականացնէի վերջապէս արդարադատութիւնը՝

Շար.ը էջ 4

ԿԱՌԱՎԱՐԻՉ ՇՈՒՐԱԶԸՆԻԿԻՐԻ ՇՆՈՐՀԱԴՈՐԱԿԱՆ ԽՕՍՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻ

Նոր Սերունդ Մշակութային Միութեան կազմակերպած Հայաստանի Անկախութեան տարեդարձին նուիրուած փառատօնին առթիւ, Քալիֆորնիա նահանգի կառավարիչ Արնոլտ Շուրգլընիկի յղած է շնորհաւորական ողջոյնի խօսք մը, որուն մէջ յատկապէս ըսուած է. -

«Մեծ հաճոյքով կը փոխանցեմ ջերմագին ողջոյններս բոլոր անոնց, որոնք կը նշեն Հայաստանի Անկախութեան տարեդարձը: Յատկանշական առիթ կը հանդիսանայ, ամէն անգամ երբ մարդիկ կը համախմբուին՝ ուրախանալու համար իրենց արմատներով եւ ես պատիւը ունիմ միանալու Ամերիկահայ համայնքին՝ սօնակատարութեան այս օրուայ առթիւ: Դուք կը հարստացնէք մեր երկիրը եւ յատկապէս մեր նահանգը, ձեր տքնաջան աշխատանքին, ծառայատիրութեան եւ մշակութային հրաշալի աւանդոյթներուն շնորհիւ: Շնորհակալութիւն ձեր բերած նպաստին համար՝ Քալիֆորնիոյ եզակի եւ օրըսօրէ աճող այլազանութեան»:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԿՈՉ Կ'ԸՆԷ ԹՈՒՐԲՈՅ ԲԱՆԱԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀԱՆԸ

«Միացեալ Նահանգները թուրքիոյ նորընտիր ղեկավարները կը նկատէ ԱՄՆ-ի բարեկամներ եւ կոչ կ'ընէ լուրջ եւ վճռական քաղաքական քայլեր կատարել՝ հրաժարելու Իրանի հետ ուժանիւթի համագործակցութեան գործարքէն, բանալու Հայաստանի հետ սահմանը, վերացնելու խօսքի ազատութեան խոչընդոտները եւ վերաբանալու Յոյն ուղղափառ եկեղեցու կրօնական դպրոցը», նման յայտարարութեամբ մը հանդէս եկած է Պետական Քարտուղարի փոխանորդ Նիկոլաս Պըրնզ:

Շար.ը էջ 4

Ա Յ Ս Կ Ի Ր Ա Կ Ի ,
 Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր 23, 2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
 ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ՀԱՆԴԻՊՈՒՆՔ ԿԼԵՆՏԵՅԼԻ
 VERDUGO PARK-Ը

FREE ADMISSION
 U.S.S.R.C. 11/15/11

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՍԱՄՈՒԼ

2,5 ՄԻԼԻԱՐԴ՝ ՌԻՆՔԸ ԾԻՆԵԼՈՒ, ԹԵ ԱՉՔՆ ԵՆ ՎԱՆԵԼՈՒ ՎԱՍԱՐ

Ինչպէս օրերս յայտնի դարձաւ վարչապետ Սերժ Սարգսեանի ելույթից, Հայաստանի կառավարութիւնը պատրաստուած է 2008 թուականի համար Ազգային ժողովին ներկայացնել 2,5 միլիարդ դոլարի մօտ բիւջէի նախագիծ: Դա մօտ 1, կամ 1,5 անգամ մեծ է 2007 թուականի բիւջէից: Առաջին հարցը, որ առաջանում է ապագայ բիւջէի ծաւալը լսելիս, այն է, թէ ինչի հիման վրայ է կառավարութիւնը նման յաւակնոտ բիւջէ ներկայացնելու: Հարցն ունի իհարկէ նոյնպէս առաջին իսկ պահից ի յայտ եկող պատասխան՝ Սերժ Սարգսեանը ցանկութիւն ունի 2008 թուականի Փետրուարին դառնալ Հայաստանի նախագահ, եւ 2,5 միլիարդանոց բիւջէն կարող է լինել փայլուն նախընտրական գովազդ նախագահութեան ձգտող վարչապետի համար: Սերժ Սարգսեանն ինքն իհարկէ հերքեց, թէ բիւջէն նախընտրական է, ասելով, որ ինքը աւանտիւրիստ կամ արկածախնդիր չէ: Բայց այն պատասխանը, որ վարչապետը տուեց լրագրողի հարցին, թէ ինչի հաշուին է այդ բիւջէն ծրագրուելու եւ կատարուելու, աւելի է ամրապնդում կասկածը, որ 2008 թուականի բիւջէն բացառապէս նախընտրական է:

Ըստ վարչապետի, նախորդ տարիներին այնքան հարկ է հաւաքուել, որ եթէ մի քիչ էլ հաւաքենք, ապա կը կարողանանք ունենալ այդպիսի բիւջէ: Սա մի փոքր տարօրինակ պատասխան է: Կարելի է ասել՝ պատասխան է պատասխանելու համար: Հայաստանի ներկայիս բիւջէն քիչ աւելի է մէկ միլիարդից: Եթէ յաջորդ տարուայ համար ներկայացուելու է 2,5 միլիարդանոց բիւջէ, ապա անհրաժեշտ է լինելու ոչ թէ «մի քիչ էլ հարկ հաւաքել», այլ հաւաքել առնուազն այնքան աւելի, ինչքան հաւաքուել է կամ հաւաքուելու է 2007 թուականի մէկ միլիարդանոց բիւջէի համար: Իսկ դա բաւական լուրջ խնդիր է, եթէ իհարկէ կառավարութիւնը շարունակելու է հարկ հաւաքել այնպէս, ինչպէս այժմ: Իսկ ինչպէս են այժմ հարկ հաւաքում: Վարչապետը, կամ նախագահը կանչում են հարկային ու մաքսային պետերին ու նրանց վրայ պլան դնում: Հարկային ու մաքսային պետերը կանչում են իրենց ստորաբաժանումների ղեկավարներին, ու նրանց վրայ պլան դնում, իսկ ստորաբաժանումների ղեկավարներն էլ կանչում են իրենց ենթակայ տեսուչներին, ու պլանը փոխանցում նրանց: Տեսուչներն անցնում են գործի: Իսկ ուր պէտք է գործի անցնի շարքային տեսուչը: Իհարկէ, իր նման շարքային օբիեկտում: Տեսուչը չի կարող գնալ այնպիսի ձեռնարկութիւն, որը պատկանում է իշխանութեան հովանաւորութիւնը վայելող որեւէ օլիգարխի: Իսկ Հայաստանում չկայ իշխանութեան հովանաւորութիւնը չվայելող օլիգարխ: Նա, ով իշխանութեան հովանաւորութիւնը չի վայելում, անգամ այդ հովանաւորութիւնից զրկուելուց առաջ է արդէն զրկուած լինում օլիգարխիկ հնարաւորութիւններից: Իսկ իշխանութեան հովանաւորութիւնը վայելող գործարարները սնորհներ են Հայաստանի տնտեսութեան առնուազն 60-70 տոկոսը: Դա իհարկէ ոչ պաշտօնական տու-

եալով, որովհետեւ պաշտօնական տուեալով մեր տնտեսութիւնն ամենից ազատականներից է աշխարհում, եւ այստեղ մրցակցութիւնն աւելի հաւասար է, քան նորմալ մարդու երկու ձեռքերը: Սակայն տնտեսութեան հաւասարութիւնը ենթադրում է մրցակցութիւն, իսկ մրցակցութիւնը ենթադրում է, որ այնպիսի դէպքերում, երբ երկրի դրամը արժեւորւում է ու ներմուծումը դառնում է նպաստաւոր, ներմուծող ապրանքը ոչ թէ պէտք է թանկանայ, այլ պէտք է աւելի էժամանայ, եթէ կայ մրցակցութիւն: Մինչդեռ Հայաստանի դրամի արժեւորումը բերեց ներմուծող ապրանքի թանկացման, ինչը վկայում է, որ Հայաստանի տնտեսութեան մէջ իրականում բացակայում է մրցակցութիւնը, որովհետեւ բացակայում է հաւասարութիւնը: Դա էլ իր հերթին մեզ հիմք է տալիս աւելի հաւատալ ոչ պաշտօնական տուեալներին, քան պաշտօնական վիճակագրութեանը կամ գնահատականներին:

Ստացուած է, որ հարկային տեսուչները 2,5 միլիարդ բիւջէ ապահովելու համար պէտք է սկսեն մշակել տնտեսութեան այն հատուածին, որը ղեռն է ի յայտնուել օլիգարխիայի տիրոջթում: Մաշկել բառը գուցէ շատերին կուպիտ թուայ, բայց եթէ որեւէ մէկը քիչ թէ շատ տեղեակ լինի այն մեթոդներից, որոնցով տեղի է ունենում հարկերի հաւաքագրումը, ապա մաշկելը կը դիտուի մեղմ բնորոշում: Այսինքն, այդ 30-40 տոկոսանոց մասը ու միջին հատուածը պէտք է վճարի բիւջէի առիւծի բաժինը, իսկ «առիւծի բաժինը» պէտք է շարունակի մնալ անձեռնմխելի: Կասկածից վեր է, որ բիւջէն կը կատարուի, այսինքն հարկային ծառայութիւնը նոյնիսկ կը գերակատարի մասը ու միջին գործարարների կաշուի մթերման պլանը: Թէեւ իհարկէ բիւջէի կատարման պահը գուցէ այդքան էլ կարեւոր չլինի, որովհետեւ կատարման պահին նախագահի ընտրութիւնն արդէն կը լինի շատ հեռու անցալուծում: Բայց նոյնիսկ եթէ կատարուում է այն յաւակնոտ բիւջէն, որ ներկայացուելու է, ապա կատարումը թերեւս աւելի մտահոգիչ պէտք է լինի, քան չկատարումը: Բանն այն է, որ եթէ կիրառուում են հարկահաւաքութեան այն մեթոդները, այն մօտեցումները, որ առկայ են այժմ, ստուերի դէմ պայքար ստուածի շրջանակը ներառելու է, օրինակ տօնավաճառների մանրավաճառներին, եւ ոչ տօնավաճառների սեփականատէրերին, ապա վերջին կուպեկները վճարելուց յետոյ, մասը ու միջին անկախ բիզնեսը, որ ղեռ որեւէ օլիգարխի ծիրում չէ, հարկային բեռին չզիմանալով ստիպուած է լինելու կամ վաճառել իր բիզնեսը օլիգարխին կամ նրա մերձաւորներին, կամ էլ նրանց հետ համաձայնութեան գալով սկսել աշխատել տուեալ կլանի տանիքի տակ: Դա նշանակում է, որ ամէն մի կատարուած այդ օրինակ բիւջէ Հայաստանի տնտեսութիւնն աւելի ու աւելի է մղելու դէպի կլանայացում, եւ հասարակութիւնը մի օր երանի է տալու, որ գայ մի ժամանակ, երբ մենք բիւջէ չունենանք ու ապրենք հանգիստ:

ՅԱԿՈՐ ԲԱԴՂԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ԶԱՐՄԱՆՔ

Վերջերս մեզ զարմացրեց ՌՌԲԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԸ: Տասը տարի Հայաստանում բարձրագույն ղեկավար պաշտօններ զբաղեցնելով՝ նա յանկարծ իր լիազօրութիւնների աւարտից մի քանի ամիս առաջ որոշեց, որ անհրաժեշտ է կողուպցիայի դէմ յատուկ միջոցներով պայքար նախաձեռնել: Իհարկէ լաւ է, որ երկրի նախագահը, թէկուզ եւ ուշացումով, տեսաւ, որ երկրում կողուպցիան ահաւոր ընդգրկումներ ունի. ինչպէս ասում են լաւ է ուշ, քան երբեք, թէեւ այդ «ուշ, քան երբեք»-ի մասին տամեակներով անեկդոտներ կան: Սակայն այն, ինչ Ռոբերտ Քոչարեանը նոր տեսաւ, յայտնի է ՀՀ բոլոր քաղաքացիներին՝ մանկապարտէզի տարիքից սկսած, եւ պատահական չէ, որ օրերս դաշնակցական պատգամաւոր, նախկինում մարզպետ Հրայր Կարապետեանը մատնանշել էր, որ երկրում չկողուպցուած չինտլ-նիկներ չկան, իսկ եթէ կան էլ, ապա անպայման կը կողուպցուեն: Ինչեւէ, յուսանք, որ իր պաշտօնավարման վերջին ամիսներին, գործող նախագահը գոնէ կը հասցնի, բացի կողուպցիան նկատելուց, դրա դէմ նաեւ ինչ-որ բաներ անել: Ինչպէս ցոյց տուեցին խորհրդարանական քննարկումները, ԱԼՈՒԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆԸ՝ որպէս զխաւոր դատախազ, այս իշխանութեան համար անփոխարինելի է: Սակայն հայոց թիւ 1 իրաւապահը խորհրդարանի տարածքում այնքան շատ զարմանալի բաներ ասաց, որ թերեւս կատարեց եւ գերակատարեց մի քանի տարուայ պլանը: Նախ զարմանքով հենց Աղուն Գառնիկովիչի կատարմամբ անապասելի-օրէն տեղեկացանք, որ շուտով շրջանառութեան մէջ է դրուելու մի օրինագիծ, համաձայն որի՝ «պլան» սիրողները, այսինքն՝ թմրամոլները, «պլանքաշները», շուտով պէտք է այլեւս քրէական յանցագործ չհամարուեն: Դա յոյժ զարմանալի է, քանզի յայտնի է, որ ամէն մի թմրամոլ յաջողացնում է «ասեղի վրայ նստեցնել» եւ մի քանի հոգու, իսկ թմրամոլներին չպատեղը ի վերջոյ ինչի է վերածուած, գիտենք Հոլանդիայի օրինակով, ուր թմրանիւթ վաճառելը միանգամայն օրինական է: Ինչեւէ, թէեւ վստահ ենք, որ ամենայն հայոց դատախազը հաստատ կապ չունի այնպէս կոչուած լիբերտարեան միջազգային կուսակցութեան հետ, որի քաղաքական նպատակներից մէկը ամբողջ աշխարհում թմրաուեւորի օրինականացումն է, այնուամենայնիւ, ոչ պակաս զարմանալի բաներ էլ են հնչել նրա շուրթերից:

Այսպէս՝ անդրադառնալով Լոուու մարզի դատախազի սպանութեանը, նա ասաց. «Հակուած չեմ սպանութիւնը չբացայայտուած թողնելու»: Այսինքն ի՞նչ, կարող են նաեւ սպանութիւններ լինել, որոնք հակուած լինի չբացայայտուած թողնելու... Չնայած ինչո՞ւ զարմանանք, երբ կան բազում չբացայայտուած սպանութիւններ, որոնց մանրամասնութիւնները, սակայն համապատասխան թաղի բնակիչներին առաջին իսկ օրերից նոյնքան յայտնի էին, որքան՝ գիւմրեցիներին «չպիտն Օնիկի» տան հասցէն:

Պարոն Յովսէփեանը չմոռացաւ եւ զարմանալի անդրադարձ կատարել նաեւ մեր գործընկեր Արման Բաբաջանեանի ազատագրմանը. «Այս յանցագործութիւնը կատարուել է այն ժամանակ, երբ Արման Բաբաջանեանի մայրն աշ-

խատել է ՀՀ նախագահի աշխատակազմում եւ օգտագործել իր դիրքը, որպէս նախագահականի աշխատակից»: Դրանով զխաւոր դատախազը զարմանալիօրէն խոստովանեց, որ նախագահականում թէկուզ անյայտ պաշտօն ունենալը բաւարար է բանակից ազատելու հարց լուծելու համար, սակայն զարմանալիօրէն օղի մէջ մնում է եւ հետեւեալ հարցադրումը. իսկ ինչո՞ւ ոչ ոքի մտքով չի անցել քրէական պատասխանատուութեան ենթարկել ոչ թէ Արմանին, այլ «նախագահականի աշխատակցին» ինչպէս նաեւ համապատասխան գինկոմին... անելը:

Պարզուած է, որ որոշ քաղաքական այլեր ոչ մի կերպ չեն «թարգում» ակնյայտ ժխտելու զարմանալի սովորութիւնը: Այդպիսիներից է նաեւ ՀՀԾ վարչութեան փոխնախագահ ԱՆԴՐԱՆԻԿ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԸ: Սոյն իմաստնագոյն այլը յանկարծ յայտնաբերեց, որ ոչ թէ ՀՀԾ-ի իշխանութեան օրօք Հայաստանում գոյացաւ հերքետիկ ահաւոր ճգնաժամ, որի պատճառով հայերը հասցրեցին զիշերային գիշատիչների բնագոյներով օժտուել, այլ ՀՀԾ-ն երախտապարտ հայ ժողովրդին փրկեց հերքետիկ ճգնաժամի ճիրաններից՝ վերաբացելով ԽՍՀՄ-ի կողմից փակուած ատոմակայանը: Մնում է զարմանալ, թէ ինչպէս այդ գործիչը ժխտում է այն, ինչը յիշում են բոլորը, եւ ինչպէս է նա մոռանում, նոյն ՀՀԾ-ի առաջնորդների պահանջը՝ փակել «այդ հրէշաւոր ատոմակայանը», «Նախրիտը» եւ արդիւնաբերութեան հիմնասին հանդիսացող այլ ձեռնարկութիւններ... Իսկականից զարմացած է

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՂԱՋԵԱՆԸ
«ԽՍՀՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ՝
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արևմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՍԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ՊԵՃԱՆԵԱՆ
ԽՍԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ
Շե. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԼԱՋԵԱՆԸ ԿՐԿԻՆ ՅԱՐՁԱԿՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՈՒԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Շաբաթ, Սեպտեմբեր 15-ի երեկոյան յարձակում է տեղի ունեցել «խսկական իրաւունք» թերթի խմբագիր Յովհաննէս Գալաջեանի վրայ: Անյայտ անձինք մահակներով ծեծի են ենթարկել 44-ամեայ լրագրողին եւ փախուստի դիմել:

Գալաջեանը վնասուածքներով տեղափոխուել է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հիւանդանոց, որտեղ նրան այսօր կ'աչցելի դատական բժիշկը:

Երեւանի կենտրոն համալսարանի ուստիկանութիւնը նիւթեր է հաւաքում՝ ներկայացնելու համալսարանի դատախազութեանը՝ դէպքի կապակցութեամբ քրէական գործ յարուցելու համար, ինչը, ամենայն հաւանականութեամբ, կ'արուի այսօր:

Շաբաթ ուշ երեկոյան հիւանդանոցում Գալաջեանը լրագրողներին յայտնեց, որ յարձակողները երկու «թիկնապահային կադրեր» էին: Նա պատմեց, որ առաւօտեան մի երիտասարդ էր գտնուող հարեւ, ներկայացել որպէս «Ազգ» թերթի թղթակից՝ Մանուկ անունով, ասել էր, թէ գործ ունի, եւ ինքը նրան հրահարել էր խմբագրութիւն ու տուել իր բջջային հեռախօսի համարը. - «Յետոյ 7-ին 15 պակաս նա ինձ գանգահարեց, որ ցերեկով եկել է եւ իմ նկարագրածով չի կարողացել կողմնորոշուել, եւ ես առաջարկեցի, որ [երեկոյան] ուղիղ 7-ին գամ, ֆուտբոլի ֆեդերացիայում իրեն դիմաւորեմ: Երբ արդէն իջնում էի՝ 7-ին մի քանի բազիլ պակաս, մի երիտասարդ՝ կեպկայով, մահակով անմիջապէս հարուածեց գլխիս՝ երրորդ - չորրորդ յարկերի կողմերը: Հարուածը եղաւ՝ ես միանգամից յարձակուեցի նրա վրայ, տապալեցի գետնին: Արդէն համարեա խլել էի մահակը, երբ էլի



Յովհաննէս Գալաջեան հիւանդանոցին մէջ

մահակի հարուած զգացի գլխիս ու ուրիշ տեղեր էլի հարուածներ, տեսայ, որ եւս մի երիտասարդ ինձ հարուածում է: Ես փորձում էի այդ երկուսի հարուածներից մի կերպ պաշտպանուել: Ի վերջոյ, թողեցին փախան, ես մի կերպ բարձրացայ վեցերորդ յարկ, կարողացայ գանգահարել Հայկ Բաբուխանեանին, պատմել կատարուածը»:

Ի պատասխան այն հարցի, թէ ո՞ւմ է կասկածում, Գալաջեանը ասաց. - «Այս պահին դժուար է կողմնորոշուել: Միշտ էլ սուր բաներ գրում եմ, անպակաս է»:

Աւելի ուշ, երբ արդէն նաեւ որոշակի քննչական նախնական գործողութիւնն աւարտուել էր հիւանդանոցում, Յովհաննէս Գալաջեանն իր ենթադրութիւնների մասին ասաց. - «Տեսան, որ ես ինդրել եմ գլխաւոր դատախազութեանը՝ ստուգելու, արդեօք հնարաւոր է, որ անցեալ տարուայ յարձակման պատուիրատուները լիւնեն կամ դրա հետ ինչ-որ ձեւով կապ ունենան [«Սահմանադրական իրաւունք» միութեան նախագահ] Հրանդ Խաչատրեանը, Կարէն եւ Սուրէն Վարդանեանները, այժմ Արաբկիրում քննուում է: Զգիտեմ, միգուցէ, կարող է պատահել եւ այդ ուղղութիւնը, բայց միանշանակ պնդել չեմ կարող»:

ԱՐԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԵՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԱՐՉԱՊԵՏ

ԵՐԵՒԱՆ, «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Լեւոնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեանը այսօր հրամանագիր է ստորագրել Արա Յարութիւնեանին վարչապետ նշանակելու մասին: Համաձայն հրամանագրի, վարչապետը քանսօրեայ ժամկէտում նախագահին առաջարկութիւն կը ներկայացնի կառավարութեան կազմի վերաբերեալ:

Լեւոնային Ղարաբաղի նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութեան փոխանցմամբ, Բակո Սահակեանն այսօր ընդունել է նորանշանակ վարչապետին: Յանձնարարելով հնարաւորինս սեղմ ժամկէտում ներկայացնել կառավարութեան կազմը՝ նախագահը յոյս է յայտնել, որ Յարութիւնեանի ղեկավարած կառավարութիւնը պատուով կը կատարի իր առջեւ դրուած խնդիրները, հանրապետութեան տնտեսութիւնում, սոցիալական ոլորտում կ'արձանագրի շօշափելի արդիւնքներ եւ կը ձեւաւորի ժամանակի պահանջներին համապատասխան կառավարման նոր ոճ:

Արա Յարութիւնեանը, որը 2005 թվականին պատգամաւոր է ընտրուել մեծամասնական համակարգով, խորհրդարանում յայտարարեց, որ վայր է դնում պատգամաւորական մանդատը եւ հրա-



ԼՂԶ նոր վարչապետ Արա Յարութիւնեան

ժարում է «Ազատ հայրենիք» կուսակցութեան նախագահի պաշտօնից՝ «վարչապետի պարտականութիւնները լիարժէք կատարելու համար»:

34-ամեայ Արա Յարութիւնեանը մասնագիտութեամբ տնտեսագէտ է, աւարտել է Արցախի պետական համալսարանի ասպիրանտուրան: 1999 - 2004 թվականներին նա զբաղեցրել է Հայագրորգանկի Ստեփանակերտի մասնաճիւղի կառավարչի պաշտօնը, մինչ այդ եղել է Հայագրորգանկի Ասկերանի մասնաճիւղի կառավարիչը:

1992 թվականին Յարութիւնեանը անդամագրուել է Լեւոնային Ղարաբաղի ինքնապաշտպանութեան ուժերին եւ ակտիվ մասնակցութիւն է ունեցել պատերազմական գործողութիւններին:

ՇՈՒԷԴԱՐԱՅԸ ԱՄԱՉՈՒՄ Է ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՄԱՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Եթէ մեր կուսակցութեանն արդէն մարդիկ չեն անդամագրուում, մենք մտածում ենք նոր մարտավարութիւն որդեգրելու մասին», - մեզ հետ զրոյցում նկատեց Շուէդիայի «Զախ ֆեմինիստական կուսակցութեան» անդամ, Շուէդիայի խորհրդարանի պատգամաւոր հայագրի Մուրադ Արթինը: Նա 22 տարի առաջ յայտնուել է Շուէդիայում եւ անմիջապէս մէկ տարի յետոյ անդամագրուել այս կուսակցութեանը:

Զախ ֆեմինիստական կուսակցութիւնն, որն ունի 13000 անդամ, արդէն 4 տարի ակտիվօրէն համագործակցում է ՀժԿ-ի հետ:

«Որպէս ձախ կենտրոնամէտ ուժ ծանօթացանք ՀժԿ-ի հետ եւ մինչ օրս սերտ համագործակցում ենք», - ասաց Մուրադ Արթինը: Ի դէպ, ՀժԿ-ն էլ բաւականին լուրջ է վերաբերում համագործակցութեանը: Հետաքրքիր գուճողի պարթեմբեամբ, «Զախ ֆեմինիստական կուսակցութիւնն» էլ զոհ է Շուէդիայի վերջին խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքներից. այսօր նրանք խորհրդարանում ներկայացուած են աւելի քիչ, քանի երբեք է՝ 13 կին, 9 տղամարդ պատգամաւորով: Իսկ 1998 թ-ին այս կուսակցութիւնն արժանացել էր հասարակութեան 12 տոկոսի վստահութեանը՝ ձեռք բերելով 43 մանդատ:

Մուրադ Արթինին մտահոգում է Հայաստանի քաղաքական-հասարակական համակարգում կանանց ներգրաւուածութեան ցածր տոկոսը: «Ես ամաչում եմ Հայաստանում կանանց վիճակի համար: Նոյնիսկ Թուրքիայի պառլամեն-



Շուէդիայի խորհրդարանի պատգամաւոր հայագրի Մուրադ Արթին

տում 25 տոկոսը կին է», - հայկական քաղաքական համակարգից իր հիասթափութիւնն է արտայայտում Մուրադը:

«Չկայ ժողովրդավարութիւն առանց կանանց եւ երիտասարդութեան», - կարծում է ինչոպէս անուանումով միջազգային կոնֆերանսի մասնակիցները: Կոնֆերանսը, որը տեղի ունեցաւ Մոսկուայում, կազմակերպել էին ՀժԿ-ն եւ շուէդական «Զախ ֆեմինիստական կուսակցութիւնը»: Ի դէպ, ֆեմինիստական անուանումը բոլորովին այլ բնույթ ունի Շուէդիայում, քան ընկալում է մեզանում. կուսակցութիւնը ոչ թէ զբաղուած է կանանց իրաւունքների պաշտպանութեամբ, այլ կանանց եւ տղամարդկանց իրաւահաւասարութեան շատագոյն է:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԿԸ ԼԻՆԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ԿԱՄ ՌՈՒՍԱՄԵԱՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան 11-րդ Գերագոյն ժողովը որոշել է, որ «ՀՀ նախագահի թեկնածու կ'առաջադրի՝ ընտրութիւն կատարելով ընկերներ Վահան Յովհաննիսեանի եւ Արմէն Ռուստամեանի միջեւ»:

Ստեփանակերտում կայացած ժողովի մասին Դաշնակցութեան տարածած յայտարարութիւնում ասուած է. - «Կազմակերպական կառուցի տեսակէտի բիւրեղացման, ինչպէս նաեւ ժողովրդային եւ համակիր շրջանակների կարծիքի հիման վրայ արտակարգ Գերագոյն ժողովը ՀՀ նախագահի թեկնածու կ'առաջադրի՝ ընտրութիւն կատարելով ընկերներ Վահան Յովհաննիսեանի եւ Արմէն Ռուստամեանի միջեւ»:

Տարածուած յայտարարութիւնը տեղեկացնում է նաեւ, որ ՀՅԴ-ն, համոզուած լինելով, որ, ի թիւս այլնի, «երկրի առաջընթաց զարգացման արագացման ապահովմամբ է միայն հնարաւոր ար-

դար եւ խաղաղ լուծման հասցնել Լեւոնային Ղարաբաղի հիմնախնդիրը», «չէզոքացնել անվտանգութեան արտաքին եւ ներքին սպառնալիքները՝ բովանդակ հայ ժողովրդի կարողակախութիւնը ուղղորդելով համազգային խնդիրների եւ հարցերի լուծմանը», որոշել է «Մասնակցել Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին սեփական թեկնածուով»:

«ՀՀ նախագահի թեկնածուի առաջադրումը կատարել երկու փուլով՝ աչդ օրակարգով նոյեմբեր ամսին, հրաւիրելով ՀՅԴ Հայաստանի կազմակերպութեան արտակարգ Գերագոյն ժողովը: Կազմակերպական կառուցի տեսակէտի բիւրեղացման, ինչպէս նաեւ ժողովրդային եւ համակիր շրջանակների կարծիքի հիման վրայ արտակարգ Գերագոյն ժողովը ՀՀ նախագահի թեկնածու կ'առաջադրի՝ ընտրութիւն կատարելով ընկերներ Վահան Յովհաննիսեանի եւ Արմէն Ռուստամեանի միջեւ»:

ՍԵՏՐՈՅԻՑ ՕԳՏՈՒՈՂՆԵՐԸ ՇԱՏԱՑԵԼ ԵՆ

Երեւանում իրականացուող շինարարական աշխատանքների շնորհիւ աւելացել է մետրոյից օգտուողների թիւը: Այդ մասին են վկայում նախորդ տարուայ համեմատութեամբ այս տարուայ նոյն ժամանակահատուածի տուեալները:

«Եթէ անցած տարուայ Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներին մետրոպոլիտանից օգտուել է 40 հազարից 45 հազար ուղեւոր, այս այս տարի ուղեւորների թիւը 20 հազարով աւելացել է՝ կազմելով 60-65 հազար ուղեւոր», - այս մասին «Ա+»-ին ասաց «Երեւանի մետրոպոլիտենի» մամուլի քարտուղար Արուսեակ Գէորգեանը: Նա այսպիսի ցուցանիշները պայմանաւորում է ինչպէս քաղաքում կատարուող շինարարական աշխատանքներով, այնպէս էլ դասերի սկսուելով:

ԼՈՒՐԵՐ

**ՊԵՏՂԵՊԱՐՏԱՍԵՆՏԸ ՂԱՐԱԲԱՂԸ ԿՐԿԻՆ
«ՕԿՈՒՊԱՑՈՒԱԾ» Է ՀԱՄԱՐԵԼ**

ԱՄՆ պետդեսպարտամենտի՝ «Կրօնական ազատությունների մասին» տարեկան զեկոչցում ասուած է որ, Հայաստանեայց (առաքելական) եկեղեցին, որն ունի ազգային եկեղեցու իրաւական կարգավիճակ, օգտուած է մի շարք արտօնութիւններից, որոնք չեն գործում այլ կրօնական խմբերի համար: Ըստ զեկոչցի՝ օրէնսդրութեամբ կան որոշ սահմանափակումներ փոքրամասնական կրօնական խմբերի յարողները կրօնական ազատութեան նկատմամբ, եւ որոշ սահմանափակումներ գործնականում կիրառուել են: Ընդհանրապէս՝ հասարակութեան վերաբերմունքը որոշ փոքրամասնական կրօնական խմբերի նկատմամբ եղել է հակասական, եւ եղել են հաղորդումներ հասարակութեան կողմից իրենց անդամների դէմ խտրականութեան դրսևւորման վերաբերելով:

Զեկոչցի հեղինակները նշում են, որ ԵՏՈՎԱԳԻ վկաներից ու աղվենտիստներից ստացուել են հաղորդումներ, որ ստորին օղակի պետական պաշտօնեաներն իրենց թոյլ չեն տուել կրօնական հաւաքների համար օգտուել հասարակական վայրերից: Այնուհանդերձ, ԵՏՈՎԱԳԻ վկաները նշում են, որ ընդհանուր առմամբ ազատ հաւաքներ անցկացնելու հետ կապուած խնդիրներ չեն եղել ու հաւաքների ժամանակ ոտնձգութիւններ ոտտիկանութեան կամ այլ պետական կառոյցների կողմից չեն եղել: ԵՏՈՎԱԳԻ վկաների կողմից եղել են հաղորդումներ, որ այլընտրանքային գինւորական ծառայութիւնից խուսափելու համար դատաւորները իրենց դատապարտել են ազատագրկման, սակայն պատիժն այնուհետեւ սահմանափակ եղել է օրէնքով նախատեսուած պատժի սահմաններում:

Զեկոչցի վերջում ասուած է, որ

կրօնական ազատութեան հարցը ԱՄՆ կառավարութիւնը քննարկում է կառավարութեան հետ՝ մարդու իրաւունքների ապահովման քաղաքականութեան համատեքստում: Այս քննարկումների ընթացքում ԱՄՆ կառավարութիւնը շեշտել է, որ Հազարամեակի մարտահրաւէր ծրագրով նախատեսուող 235 մլն դոլար (մօտ 79 միլիարդ ՀՀ դրամ) աջակցութեան պայմաններին շարունակաբար բաւարարելու պայմանաւորուած է արդարացի կառավարման ցուցանիշների ուղղութեամբ կառավարութեան գործունէութեամբ, որը նաեւ ներառում է կրօնական ազատութեան նկատմամբ յարգանքը:

Միացեալ Նահանգների Պետդեսպարտամենտը Ղարաբաղին անդրադառնում է Ատրպէյճանին վերաբերող բաժնում: Այստեղ նշուած է, որ որ Լեւոնային Ղարաբաղում առանձնապատուկ կարգավիճակ ունի Հայ առաքելական եկեղեցին:

«90-ական թուականներին Հայաստանի հետ պատերազմի ընթացքում տեղի ատրպէյճանական բնակչութիւնը՝ հիմնականում մահմեդականներ, փախուստի է դիմել Լեւոնային Ղարաբաղից եւ գրաւեալ 7 շրջաններից եւ ի գորու չէ վերադառնալ», - ասուած է զեկոչցում: Պետդեսպարտամենտը այս զեկոչցում վերստին օգտագործել է «օկուպացուած բառը»՝ նշելով, որ Լեւոնային Ղարաբաղի օկուպացուած տարածքում, որը «չի վերահսկուում Ատրպէյճանի կառավարութեան կողմից», իշխանութիւններն ազատ են արձակել գինւորակութիւնը մերժելու մեղադրանքով բանտարկուած բազմաթիւ Գաղիկ Միրզոյեանին եւ փոխարկել են նրան գինւորական ստորաբաժանում՝ ծառայութիւնն աւարտելու համար:

**«ԱՅՍՈՐ ԹՈՒՐԲԻԱՆ ՀԱՅԵՐԻՆ ՊԱՐՏՔ Է
41, 5 ՄԻԼԻԱՐԴ ԴՈՒԱՐ»**

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՐ-ՖԷ»: «Այսօր թիւը ըմբռնում կայ, թէ Հայոց պահանջատիրութիւնը անցեալի կամ հեռու արագացի հարց է: Այսօր ՀՀ-ն չի կարող լուծել իր առջեւ ծառայած մի շարք խնդիրներ, մարտահրաւէրներ, այդ թիւում է՝ անվտանգութեան, տնտեսութեան առնչուող հարցեր, եթէ չլուծի հայկական հարցը: Այսինքն՝ վերահաստատելու իր իրաւունքները իր օրինական տարածքների վրայ», - կարծում է Գանատայում ՀՀ նախկին դեսպան, քաղաքագէտ Արա Պապեանը:

Իր տեսակէտները Արա Պապեանը հիմնաւորում է «Հայոց պահանջատիրութեան իրաւական հիմունքները» յօդուածների ժողովածուում, որը լոյս է տեսել ընդամենը երէկ: Օրինական տարածքներ ասելով՝ Արա Պապեանը նկատի ունի 1920թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ եւ մինչ օրս ուժի մէջ գտնուող ԱՄՆ նախագահ Վուդրօ Վիլսոնի իրաւարար վճռով Հայաստանին պատկանող տարածքները:

Վիլսոնի իրաւարար վճռի համաձայն՝ ՀՀ տիրոջ ու իրաւունքները ճանաչուած են Օսմանեան կայսրութեան վան, Բիթլիս, Էրզրում եւ Տրապիզոն նահանգների վրայ, որոնք կազմում են 103.599 քառ. կմ.: Պարոն Պապեանը նշեց, որ Վիլսոնի իրաւարար վճիռը վերջնական է եւ պարտադիր է կիրառման: Այն չունի ժամանակային սահմանափակում եւ նրա կարգավիճակը կախում չունի վճռի հետագայ ճակատագրից: Այն պարտադիր է ոչ միայն Հայաստանի եւ թուրքիայի համար, այլեւ վճիռը կնքած բոլոր երկրների համար, որոնք 16-ն են:

«Հիմնականում շփոթութիւնն այն է, որ Սովետական միութեան վարչական սահմանները շփոթում Հայաստանի սահմանների հետ: Սովետական հանրապետութիւնները միջազգային իրաւունքի սուբիեկտներ չէին եւ չունին իրաւական հետեւանքներ թողնելու իրաւունք: Դա վերաբերում է նաեւ հայ-ատրպէյճանական սահմանին: Այսօր, երբ Ատրպէյճանը ասում է Հայաստանն ու Ղարաբաղը խախտել են իր տարածքային ամբողջականութիւնը, ապա նախ պետք է միջազգային իրաւունքով փաստի, թէ ինչ է նշանակում Ատրպէյճանի տարածքը», - ասում է նա: Պապեանի յօդուածաշարը հիմնաւորում է, որ ոչ թէ ՀՀ-ն է խախտել Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, այլ՝ ճիշդ հակառակը:

Իր տեսակէտը կեանքի կոչելու



Քաղաքագէտ Արա Պապեան

համար՝ Արա Պապեանը կարծում է, որ ՀՀ-ն որպէս ՄԱԿ-ի անդամ երկիր պետք է դիմի ՄԱԿ-ի միջազգային դատարան, հաստատի Վիլսոնի իրաւարար վճռի վաւերականութիւնը եւ իր տիրոջը վերահաստատի վճռով Հայաստանին յատկացուած տարածքների վրայ:

Քաղաքագէտն իր յօդուածներից մէկը նուիրում է Հայերին պատճառած նիւթական վնասին. «Մի պարզ հաշուարկով թուրքիայի պարտքը Հայերին կազմում է 41, 5 միլիարդ ԱՄՆ դոլար: Սա ոչ թէ մեր կողմից հարուած թիւ չէ, այլեւ Փարիզեան յատուկ համաժողովի հաշուարկն է եւ այն վերաբերում է մինչեւ 1920թ. թուրքերի կողմից հայերին պատճառած վնասին»: Պապեանի յօդուածները մէկը նուիրում է հայ-թուրքական սահմանին եւ ՀՀ-ի շրջափակմանը: «Ինձ համար հասկանալի չէ, որ մինչ օրս ինչու մենք հարց չենք բարձրացրել ՄԱԿ-ի անվտանգութեան խորհրդում կամ միջազգային դատարանում՝ Հայաստանի շրջափակման մասին»:

Արա Պապեանին զարմացում եւ զայրացում է նաեւ հայկական բանակի մասին հնչող այն յայտարարութիւնները, որ մենք ամենամարտունակն ենք: «Մենք շատ լաւ գիտենք, թէ ով է մատակարարում Ատրպէյճանի բանակին: Բոլորս էլ գիտենք, որ մեր իրական թշնամին թուրքիան է, ոչ թէ Ատրպէյճանը: Ինչ է՝ մեր բանակը թուրքիայի բանակից ուժեղ է: Ինչու՞ ենք ձեւ անում»:

Պապեանի կարծիքով՝ այսօր պետք է ձեւափոխուել նաեւ՝ թուրքիան պետք է դառնայ ԵՄ անդամ հարցադրումը. «Մենք պետք է ասենք՝ թուրքիան արժանի է, որ դառնայ ԵՄ անդամ: Մենք միայն ուրախ կը լինենք, որ թուրքիան արժանի լինի»:

Մօտ օրերս Արա Պապեանը պատրաստուած է մեկնել ԱՄՆ-ն իր գիտական հետազօտութիւնները շարունակելու համար:

ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ԸԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

համաձայնութիւնը», - ըսաւ Ֆասիէ: Ռուս համահախազահ ԵՈՒՐԻ Մերզլեակով իր կարգին խօսելով Ղարաբաղ իրենց այցի արդիւնքներում մասին յայտնեց, որ նախագահ Բակօ Սահակեանի հետ հանդիպումը բաւական արդիւնաւէտ եղած է. «Մենք ստացանք շատ հետաքրքիր տեղեկութիւն եւ պետք է զայն վերլուծենք. այս առաջին հանդիպումն էր Բակօ Սահակեանի հետ», - ըսաւ ԵՈՒՐԻ Մերզլեակով: Երեւանի մէջ համահախազահները հանդիպած են ԱԳ նախարար Վարդան Օսկանեանի եւ Ռոբերտ Գոչարեանի հետ:

Համահախազահները նկատեցին, որ բանակցութիւնները եւ Հայաստանի ու Ատրպէյճանի նախագահներու միջեւ հանդիպումները կը շարունակուին նաեւ նախընտրական տարուայ ընթացքին՝ բնականաբար ոչ նոյն յաճախակա-

նութեամբ: Աւելի յաճախ հանդիպումներ կ'ըլլան արտաքին գործոց նախարարներու եւ համահախազահներու միջակարարով: Ատրպէյճանի ռազմաշունչ յայտարարութիւններուն վերաբերեալ հարցին պատասխանելով Պետնար Ֆասիէ ըսաւ, - «Մենք կը գտնենք, որ ռազմատենչ յայտարարութիւնները չեն նպաստեր խնդիր լուծման, իսկ եթէ չեն նպաստեր, ուրեմն վնասակար են»:

Այս առթիւ Մէթիւ Պրաչակ ստիպուած եղաւ լսել Հայ հասարակութիւնը խիստ յուզող, իր անձնական կեանքի վերաբերեալ հարցը՝ թէ ազգութեամբ թրքոհի է հետ վերջերս իր ամուսնութիւնը, որքանով կ'ազդէ բանակցային գործընթացի վրայ: Պրաչակ վստահեցուց, որ ինք արհեստավարժ դիւանագէտ է, եւ իր համար մասնագիտական պարտականութիւնները իրենց տեղը ունին, ընտանեկանը՝ իրենց:

**ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԿՈՉ Կ'ԸՆԵ ԹՈՒՐԲԻՈՅ
ԲԱՆԱԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ**

Շարունակուած էջ 1-էն

«Թուրքի Տէյլի Նիւզ» թերթի համաձայն, Ատլանտեան խորհուրդին ներս, անցնող շաբաթավերջին կայացած հանդիպման ժամանակ ելոյթ ունենալով, Պըրնզ անդրադարձած է ԱՄՆ-թուրքիա յարաբերութիւններուն, անոր հեռանկարներուն եւ մարտահրաւէրներուն:

«Մենք կ'ողջունենք նախագահի պաշտօնին Աբդուլա Գիւլի ընտրութիւնը», - ըսած է Պետական Քարտուղարի տեղակալը՝ յայտնելով, որ Գիւլի եւ Էրդողանի դաշինքը Միացեալ Նահանգներու համար շատ դրական է:

Նիկոլայ Պըրնզ բարձր գնահատած է թուրքիոյ դերը՝ որպէս կամուրջ Արեւմուտքի եւ անկայուն Մերձատր Արեւելքի միջեւ: Ան ըսած

է, թէ թուրքիան շատ յաջող օրինակ է, թէ ինչպէս մահմետական բնակչութիւն ունեցող երկրէն ներս կարելի է ժողովրդավարութիւն լինել: «Գիւլի ընտրութիւնը ցոյց տուաւ թուրքիոյ ժողովրդավարութեան հասունութիւնը», ըսած է Պըրնզ:

Անդրադառնալով Հայաստանի հետ յարաբերութիւններուն՝ Նիկոլայ Պըրնզ ըսած է, թէ ԱՄՆ-ի վարչակազմը դէմ է Հայոց Ցեղապանութեանը վերաբերող բանաձեւի ընդունման՝ Ներկայացուցիչներու Տան կողմէ: Միաժամանակ, ան յորդորած է թուրքիան վերակառուցել յարաբերութիւնները Հայաստանի հետ. - «Մենք կոչ կ'ընենք թուրքիոյ նորմալացնել յարաբերութիւնները եւ բանալու սահմանը Հայաստանի հետ», - ըսած է ամերիկացի դիւանագէտը:

ՂԱՏԱՒՈՐ ՊԱՐԳԵՒ ՕՅԱՆԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

Յուլիս 16-ին Կենտրոն եւ Նորք Մարաչ համայնքների առաջին ատենախմբի դատարանը՝ Օհանեանի նախագահութեամբ, դատարանի դահլիճէն ազատ արձակած էր գրեթէ երկու տարի Ազգային Անվտանգութեան Մատչուածութեան մեկուսարանը բանտարկուած «Ռոնալ Արմենիան» ընկերութեան ղեկավարներ՝ Գաղիկ Յակոբեանին ու Արամ Ղազարեանին, որոնք կը մեղադրուէին մաքսանեն-

գութեան, հարկերի խուսափելու եւ փաստաթուղթեր կեղծելու մէջ: Մեղադրեալները բազմիցս հրապարակաւ յայտարարած են, որ իրենց նկատմամբ հետապնդումները սկսած են, երբ իրենք մերժած էին մաքսային կոմիտէի աշխատակիցներուն կաշառք տալ:

Հարցին, թէ իր վրայ դատաւորի կայացումն չափ քանի վործեր երա՞ծ են, դատարար քառասուսուսեց. - «Ձեզ հարցաքննարար մասին խօսելը Գոչա՞յ՝ ժամանակին»:

թուրքիա յարաբերութիւններուն, անոր հեռանկարներուն եւ մարտահրաւէրներուն:

«Մենք կ'ողջունենք նախագահի պաշտօնին Աբդուլա Գիւլի ընտրութիւնը», - ըսած է Պետական Քարտուղարի տեղակալը՝ յայտնելով, որ Գիւլի եւ Էրդողանի դաշինքը Միացեալ Նահանգներու համար շատ դրական է:

Նիկոլայ Պըրնզ բարձր գնահատած է թուրքիոյ դերը՝ որպէս կամուրջ Արեւմուտքի եւ անկայուն Մերձատր Արեւելքի միջեւ: Ան ըսած

ԱԶԳԱՅԻՆ

120 ՏԱՐՈՒԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄԱՅԻՍՅԻ ՄԱՐՏԻՆ ԱՍԼԱՆԵԱՆՆԵՐ ԱՍԼԱՆԵԱՆՆԵՐ (ՇԻՆԱՐԱՐ-ԻՆԺԵՐՆԵՐ, ՆԱԽԱԳԾՈՂՆԵՐ)



Հայկական ամենահին ազգային քաղաքական կառույցը՝ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը 120 տարեկան է: Ինչու սոցիալ-դեմոկրատական ուղուածութեան, որովհետեւ իր ժամանակի քաղաքական դաշտում ձեւաւորում էր սոցիալ-դեմոկրատական թեւը, որը դեռ պէտք է զարգանար ու տարածուեր:

Հետագայում երբ ձեւաւորուեց դաշտի ազատական-դեմոկրատական թեւը, քաղաքական դաշտն ամբողջացաւ: Դաշտի թեւերը ներկայացնող քաղաքական միաւորներն՝ կուսակցութիւնների միջեւ գաղափարական մրցակցութիւնը դարձաւ քաղաքակրթութեան զարգացման, մարդկութեան առաջընթացի գլխաւոր խթանը: Ծանր ու մեծ ինտելեկտուալ աշխատանք է պահանջում քաղաքական մրցակցութիւնը, որի հիմքում դրուած պէտք է լինի կուսակցականի բազմակողմանի եւ բարձր կրթութեամբ լինելը. մաքուր հայրենասիրութիւնը, անձնուրաց նուիրութեամբ ժողովրդին, անկախ պետականութեան պահպանման եւ յարատեւման լրջագոյն եւ խորը գիտակցումը, ինչպէս նաեւ նահատակուելու՝ սեփական անձը զոհաբերելու, կամքն ու տոկունութիւնը: Այս որակներով են օժտուած եղել ՄԴՀԿ հիմնադիրները: Հայաստանի համար ճակատագրական ժամանակներում, երբ քաղաքական դաշտը գրեթէ գրպանուած է, գերեզմանը օլիգարխիկ կլանի վերածած իշխանական մի բուռ զանգուածի կողմից: Տեղին է նշել, որ 1998-ի իշխանազաւթումի տրամաբանական հետեւանքը՝ քաղաքական դաշտի կտրուկ անբարոյականացումը, իշխանութեան՝ Ռ. Քոչարեանի ձեռքում կենտրոնականացումը եւ կուսակցութիւններին կառավարելի դարձնելը դարձաւ Հայաստանը դէպի ամբողջատիրութիւն շրջելու սկիզբը, տարածաշրջանում՝ ժողովրդավարութեան կղզի լինելու վերջը:

120-ամեայ պայքարի փորձառութիւնը գալիս է ապացուցելու այն իրողութիւնը, որ ՄԴՀԿ-ն դժուարին ուղի է անցել եւ դեռ աւելի դժուարին է լինելու Հայաստանում անցնելիք իր ուղին: Աւանդական արժէքների վրայ հիմնուած, կարօտախտի կոմպլեքսից ազատուած ժողովրդի, պետութեան ապագայի ինդիւրներով մտահոգ սոցիալիստական-դեմոկրատական լուրջ կուսակցութեան հասարակական եւ քաղաքական պահանջարկը, այսօր, ինչ էլ ասել, թէ մեծ է Հայաստանում: Ինքնամաքրող, ինքնակրթող ու կրթող ՄԴՀԿ-ն արդէն կուսակում է դրա համար անհրաժեշտ ներուժը: Այդ միտումը յոյս ու հաւատ է ներշնչում թէ Հայաստանի քաղաքացիներին, եւ թէ սփիւռքի մեր հայրենակիցներին:

ՄԴՀԿ նոր ձեւաւորող թիւը լի է եռանդով եւ յաւուր պատշաճի պատրաստ է ձեւաւորելու եւ դրսեւորելու քաղաքակրթ քաղաքական պայքարի նոր որակներ, ազնիւ, նուիրեալ, գրագէտ ու թարմ, երիտասարդ կադրեր ներգրաւելու եւ ինչպէս 1988-1997 թուականներին էր, լինել անկախ պետականութեան հիմնասրբերից մէկը, լինել ՀՀ քաղաքացու ազատ խօսքի, իրաւունքների, պարտաւորութիւնների եւ սոցիալական պաշտպանութեան երաշխաւորը, մաքրագործել պատմութեան արտոտուած էջերը եւ չհանդուրժել նոր ոնտոգութիւններ:

Սա է ՄԴՀԿ-ի 120 ամեակի առիթով ամենամեծ խոստում-նուէրը թէ իրենց՝ աշխարհով սփռուած հնչակեաններին, թէ ԱՆԿԻ հայաստանի Հանրապետութեան ու նրա քաղաքացիներին:

«ԱՅՔ»

ԳԻՏԱԿՑԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԻՆ

Շարունակուած էջ 1-էն

ս տեղծագործեցին, պատանոցին, իրենց կեանքերը գոհեցին՝ ըրին, նշանաբան առաջադրելով հայ ազգաբնակչութեան ինքնուրուսեան գարգացումը յանուն ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ձեռքբերման:



Առանց ազգային գիտակցութեան զարգացման, ազգային ինքնուրոյնութեան ձեւաւորման՝ դժուար թէ կարելի դառնար հասնիլ ուրոյն ու անկախ հայրենիքի ունենալու գաղափարախօսութեան, մասնաւորաբար մեզ շրջապատող ուժեղներու, հարուստ ու այլ բարօր կեանքի պատեհութիւններ մատուցող կայսրութիւններու համաստեղութեան մէջ անկիւն մը ծուրած ու հագի հագ իր գոյութիւնը բարշտուող մեզ մեզնից տկար ածուի մը պարագային:

Մեզ, մեր հողին վրայ պահողը, անտարակոյս, պիտի հանդիսանար ազգային արժանապատուութիւնը, հաւատք մեր ազգային գոյութեան պահպանման եւ նուիրումը հանդէպ մեր հայրենիքի լինելիութեան:

Փա՛ռք հայուն մէջ այդ գիտակցութիւնները կոփող դարբիններուն, որոնք ամբօրէն կերտեցին տիպար հայը՝ հայուն մէջ:

Արդարեւ, մեր ժողովուրդի դարերու վրայ տարածուած լուրջ, գիտակցական եւ հետեւողական նուիրաբերումները, ի վերջոյ, Հայաստան աշխարհը հասցուցին անկախութեան յաղթական պատմութիւն: Եւ իր այդ իսկ հանգամանակով, Հայաստան աշխարհի անկախացման բուն կանգն, Սեպտեմբեր 21-ը, իր մէջ կը խտացնէ մեր ժողովուրդի գոյութեան պատմութեան բոլոր մանրամասնութիւնները, անով ալ բնորոշելով անոր եզակի գաղափարախօսական տարողութիւնն ու նշանակութիւնը, հիմք ընդունելով «ամէն ինչ հայրենիքի համար եւ ամէն ինչ հայրենիքով» նշանաբանը:

Դժուարին պայմաններու տակ ձեռնարկուած Հայաստանի Հանրապետութեան անկախութեան պահպանումը մէն մի հայ անհատի -

ըլլայ ան պարզ ֆաղափացի, թէ իշխանաւոր-սրբազան պարտակաւորութիւնը պարտի դառնալ: Ընտրական, սահմանադրական, ժողովրդավարական խախտումներ կը ստեղծեն անվստահութեան մթնոլորտ: Կր յառաջացնեն Ֆիզիքական եւ նիւթական անապահովութեան պայմաններ:

Կը ստեղծեն ֆաղափացիական կրաւորականութիւն, անտարբերութիւն: Այս կապակցութեամբ վկայութիւն մը՝ որ տրուած է Հայաստանի Հելսինկեան կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեանի կողմ, որ կը հաստատէ այն, թէ «Հայաստանի հասարակութեան անտարբերութիւնը հասել է այն մակարդակին, որ այդպիսի դէպքեր (ոճրային, Տ.Ա.Գ.) ընդհանրապէս տեսլիցա չեն առաջադրում»:

Այդ բոլորը կը յանգեցնեն անշուշտ արտախոսքի, վտանգելով հայրենիքի ուժական, ստեղծագործական եւ արդիւնաբերական ապահովութիւնը:

Անկման եւ վերելքի երկու պարագաներուն ալ, պարտի ինքզինքն հաւասարապէս պատասխանատու համարել աշխարհով մէկ ցրուած ամէն հայ մարդ, քան զգիտակցելով, որ հայրենիքին հասցում չորեք ծառայութիւն, ամբողջական է եւ սակարկութեան առարկայ եւ կամ պայմանադրական չէ:

Հայրենակառուցումը սրբազան առաքելութիւն է: Այս գիտակցութեամբ առաջնորդուեցան մեր նախնիները: Նոյն ոգիով պարտինք ֆալիլ եւ մեքէ, առողջ, ամուր եւ անասան հիմքերու վրայ բարձրացնելու մեր հայրենի ապագան:

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHLALAH DANCERS.

- authentic cuisine
- full hookah bar
- VIP membership
- full cocktail bar
- live belly dancing
- live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՐԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԲՈՒՇՆԻՑ ՍՓԻՒՔԱՎԱՅ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԻ Ա. ԽՄԲԻ ԸՆԴՈՒՆԱՆ 50-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՎԱՄԱԽՄԲՈՒԱԾՈՒԹԵԱՄԲ ԴԵՊՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎ...

ՊՕՂՈՍԹԻԻԹԻՆՃԵԱՆ
(**ՂԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ**)

Պատմական հակիրճ ակնարկ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից առաջին սփիւռքահայ ուսանողների ընդունման 50-ամեակի, ոսկե յոթելեանի առիթով:

Այո ընդհանուր մտահայեացքը վկայում է, որ պատմական անժխտելի ապացուցող իրողություն է, խորհրդային ժամանակը շնորհում Հայաստանի կրթական նախարարության որոշումով, հաղորդուեց, որ Հայաստան պատրաստ է, 1957թ. Ուսումնական տարիից սկսեալ սփիւռքահայ ուսանողներ ընդունելու պետություն պիւստճէի հաշուին:

Սոցիալական ունեւ պատմական մեծ նշանակություն է կազմեց անկրկնադարձ հայրենիք-սփիւռք փոխարարբերությունը յատկապէս կրթական ասպարէզում:

Շուտով կազմուեց յատուկ յանձնաժողով, նրան մաս կազմում էր նաև սոցիալական գործը: Յանձնաժողովը իր յաջորդական նիստերում որոշեց ընթացք տալ հետեւեալ թեկնածուներին որ մեկնեն Հայաստան. Անահիտ Երէցեան, (Պոլիտեխնիկ ինստիտուտ), Շուշանիկ Մոլոյան (Երեւանի Պետական Համալսարան), Արա Արտաշէսեան (Պոլիտեխնիկ ինստիտուտ), Կարպիս Տրամբեան (Պոլիտեխնիկ ինստիտուտ), Աբրահամ Արալանեան (Բժշկական ինստիտուտ): Նոյն կազմով եւ դասաւորումով մեկնեց Սիրական Ա. խումբը: Յիշեալ թուականից սկսեալ, հերթական կարգով տարուէ տարի շարունակուեց եւ ընդգրկեց աւելի քան 25 երկրների գաղթահայ օժանդներից ուսանողներ դէպի խորհրդային Հայաստան բարձրագույն մասնագիտական ուսում ստանալու համար:

Ըստ 1987 թ. տուեալներին մինչեւ սոցիալականը Հայաստանի բարձրագույն բուհերից սփիւռքահայ շրջանաւարտների (մասնագիտական զանազան ճիւղերի հետեւած) ցանկը հաշուում էր շուրջ 2000 մասնագէտ շրջանաւարտներ, որոնցից աւելի քան 1000ը Սիրիայից եւ Լիբանանից:

Դա չի շեցնում է ոչ հեռաւոր անցեալը, այն ժամանակները երբ



Առաջին սփիւռքահայ ուսանողներէն խումբ մը մեծ վարպետ Մարտիրոս Մարեանի հետ

հայ երիտասարդները մայր հողից մեկնում էին օտար երկրներ՝ բարձրագույն կրթություն ստանալու համար:

Այո, այսպէս խորհրդային իշխանութեան տարիներին մեր ժողովրդի համար ստեղծուեցին հայրենիքում կրթություն ստանալու բոլոր հնարաւորութիւնները:

Մեր պապերն ու տատերը վկայ են 1915 թ.ի արեւմտահայութեան նկատմամբ իրագործուած 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը: Մեր մանկութիւնը օրօրել են նրանց տխուր պատմութիւնը, մենք օտար ափերում ծնուել եւ հայրենիքի նկատմամբ կարօտով սնուել: Ապա, մայր հայրենիք՝ ցրեց մեր տիրութիւնը: Մայր հայրենիքի ուսումնական հաստատութիւնների դռները լայն բացուեցին մեր առաջ: Սփիւռքահայ բազմահազար երիտասարդներից ամենաբախտաւորներն են նրանք, որ խորապէս գիտակցում են հայրենիքում ուսում ստանալու, 6 տարի հայրենիքում ապրելու բախտաւորութեան արժէքը:

Անհաւատալի, բաց իրաւ, հագուակեր երեւոյթ, հայրենիքում ստեղծուեց համակարգութիւն մը, որ ապահովում էր սփիւռքահայ ուսանողների համար անվճար եւ հանրակացարանի հնարաւորութիւն, բաց աստի վճարում էր յատուկ թոշակ եւ տալիս էր անհրաժեշտ երախտաւորութիւն: Դրա

գրաւականն է, որ 50-տարուալ ընթացքում հայրենիքում մասնագիտական դիպլոմ ստացող սփիւռքահայերի թիւը հաշուում է աւելի քան 2500 մասնագէտ:

Նրանցից շատեր այսօր չափահասներ դարձել են, ուրիշներ գտնուում են հասուն տարիքում, ոմանք տակաւին հասունութեան շեմին են:

Այո, սփիւռքահայ պատանիներ էին, երբ ոտք դրեցին հայրենի բարձրագույն կրթական հաստատութիւնների շեմին, 6 տարի դարձան հայրենաբնակ: Ուսման տարիները նրանց զինեցին ոչ միայն մասնագիտական գիտելիքներով, այլ հասունացած որպէս մարդ, որպէս հարգատ Ժողովրդի եւ իրենց ապրած երկրների ժողովրդների հանդէպ ունեցած պարտաւորութիւնների գիտակից քաղաքացի: Անոնք մեծ բախտաւորութիւն ունեցան սովորելու իրենց վերածնունտ հայրենիքում եւ այդ վերածնունդի շունչը տարին սփիւռք: Նրանք քալեցին հայրենիքին լեռնային կածաններով, դիտեցին պատմական յուշարձաններ եւ նրանց հասաւ մեր տոկուն դիմացկուն, շինարար նախնիքների ձայնը: Նրանք ակնատես եղան նաև հայրենաբնակ ժողովրդի ոգու սլացքին, նրան աշխարհաշէն գործին, այդ ձայնն ու սլացքը նրանք տարան իրենց հետ եւ փոխանցեցին սփիւռքահայութեան, որպէսզի նաև կո-

փի գոյատեւելու իր կամքը, ոգևորուի հայրենիքով: Անոնք ոգևորեցին եւ խաղաղասիրական այն ոգին, որը յատուկ է հայ ժողովրդին:

Այստեղ տեղին է մէջբերում անել 1985ից երէկուայ նման յիշում եմ մեծ գրող Ռեիլիամ Սարոյեանի հանդիպումը Երեւանի պետական համալսարանի ուսանողների հետ, նա ասեց «Ես անսահման երջանիկ եմ ձեր պայծառ դէմքերը տեսնելով» իսկ երբ իմացան որ այդ երիտասարդների շարքում գտնուում է բազմաթիւ սփիւռքահայեր, ականջիս լաւ հնչում է նրա սրտագին բացազանչութիւնը «Սա արդէն հրաշք է, սրա մէջ խորհուրդ կայ, շատ մեծ խորհուրդ...»: Այս խօսքերը յաջորդ օրը կարդացել եմ «Հայրենիքի Ձայն» թերթում:

Սքանչելի բան է մեծ գրողի Ռեիլիամ Սարոյեանի «հրաշք» բառին նշանակութիւնը, այսօր ապացուցուում է սփիւռքի տարբեր գաղթահայ օժանդներում, յատկապէս Միջին Արեւելքի արաբական աշխարհում, Լիբանանում եւ Սիրիայում գործող հայ բժիշկների, դեղագործների, ատամնաբուժերի, արուեստագէտների, (իմբալար, երաժիշտ, երգիչ, բեմադրիչ դերասան) մեծամասնութիւնը Հայաստանի բարձրագույն բուհերի շրջանաւարտներ օրինակ Լիբանանում ներկայիս 177 հայ բժիշկներից 113ը Երեւանի պետական բժշկական համալսարանից են, Հայաստանում կրթություն ստացող հայագէտները, մանկավարժները, մշակույթի եւ ազգային-հասարակական-քաղաքական գործիչները ներկայումս կազմում են Լիբանանի եւ Սիրիայի հայրենի հողով կազմաւորուած մտաւորական խաւի մեծ մասը... «Հրաշք» է:

Հետեւաբար, խորհրդային Հայաստանի իշխանութեան կրթական ասպարէզում որդեգրած պատմական այս նախաձեռնութիւնը հայ ժողովրդի պատմութեան էջերում փայլուն տեղ է զբաղում: Դրա համար անմիջական անհրաժեշտութիւն է կազմել հայրենի եւ յատկապէս խորհրդային իշխանութեան ժամանակը շնորհում ապրող պատմաբաններից եւ նմանապէս սփիւռքից յանձնաժողով մը ձեռնարկելու համար գիտական ուսումնասիրութիւն 1957-1990 թթ. Հայաստանի սփիւռքահայ ուսանող-

Մար.ք էջ 19

A.B.A. INSURANCE SERVICES

Life, Health
Group Health
Disability
Long Term Care

Blue Cross of California **1975-2008** Blue Shield of California

33th ANNIVERSARY

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՐԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ
80-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ՎԵՐԵԼՔ»
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ**

Հիւսիսային Ամերիկայի թեմի հաստատման 80-ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս Կիրակի, Սեպտեմբերի 16-ին, 2007, Կլէնտէյլի Ալեքս թատերասրահին մէջ, տեղի ունեցաւ «Վերելք» գեղարուեստական երեկոն:

Ձեռով եւ խորքով ինքնատիպ միջոցառում մըն էր, որուն գործադրութիւնը մեծ մասամբ կատարուեցաւ ձայնագրուած տեսալսողական սիստեմով: Հանդիսութեան բացումը կատարեցին Յարութ Տէր Դաւիթեան եւ բարեշնորհ՝ Վահէ Սարկաւազ, նշանաբան ունենալով «Հայաստանեայց Եկեղեցին՝ գալիքին առաջնորդող կամուրջն է»:

Այնուհետեւ տեսաերիզի վրայ ցուցադրուեցաւ Արեւմտեան թեմի անցնող 80 տարիներու պատմութեան համառօտ մէկ պատկերը, որուն խօսնակներն էին Մարալ Երանոսեան-Պապեան եւ Յարութ Տէր Դաւիթեան:

Օրուան գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Առաջնորդարանի միացեալ երգչախումբը, Winds of Passion տոլտոկահարներու քառեակը, Վարդան եւ Սիրանոյշ Գէորգեաններու, ինչպէս նաեւ Չուարթնոց պարի զոյգ համոյթները: Հաճելի անակնկալ մը եղաւ նաեւ անմահն Կոմիտաս վարդապետի հարագատ ձայնի ունկնդրութիւնը:

Արեւմտեան թեմի հաստատման 80-ամեակին առթիւ Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն զրկած օրհնութեան կոնդակի ունկնդրութիւնը կարգացուեցաւ յոտնկայս:

Սոյն գեղարուեստական երեկոյի յանձնախումբի ատենապետ Տօքթ. Յարութիւն Եաղաբեան բեմ ելլելով իր շնորհակալական խօսքն ուղղեց յայտագրի մասնակիցներուն եւ ներկայ հասարակութեան ապա խօսքը տուաւ առաջնորդ Յովնան Սրբազանին:

Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան իր ելոյթին մէջ ընդգծեց այս հիւրընկալ փերուն վրայ Հայաստանեայց Առաք. եկեղեցւոյ եւ անոր ենթակայ կառույցներուն վիճակուած խիստ կարեւոր առաքելութիւնը, հասնելու համար մեր ժողովուրդի հոգեմտաւոր անասման կարիքներուն: Ան յոյս յայտնեց որ յառաջիկայ տարիները Արեւմտեան թեմին համար պիտի ըլլան առաւել արգասաբեր տարիներ ի փառս Աստուծոյ եւ մեր ազգին:

Առաջնորդ Յովնան Սրբազանի «Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ իշխարժան երեկոն:

**ԱՆԿԼԻԳԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԵՑ
ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ
80-ԱՄԵԱԿԸ**

Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան թեմի հաստատման 80-ամեակին առթիւ անցեալ Շաբաթ, Սեպտեմբեր 15ին, 2007 կրօնական բացառիկ արարողութիւն մը տեղի ունեցաւ Լոս Անճելոսի մէջ: Արդարեւ, այդ օր, քաղաքամէջի Սէնթ ձօն Անկլիզան Եպիսկոպոսական եկեղեցին լեցուն էր հայ, ամերիկացի եւ այլ բազմազգ հաւատացեալներով, որոնք եկած էին ընդառաջելով Հարաւային Գալիֆորնիոյ Անկլիզան եկեղեցւոյ առաջնորդ՝ Գերշ. Ի. Եոն

**ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐԸ**

Հայաստան Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի վարչութիւնը այս տարի եւս պատրաստած էր Գոհաբանութեան Տօնին առթիւ կատարուելիք հեռուստամարաթոնի խորհրդապատկերը (Լօկօ):

Արդարեւ անցեալ Չորեքշաբթի, Սեպտեմբեր 12ին, 2007, Կլէնտէյլի Ալեքս թատրոնի շրջաբակին մէջ, տեղի ունեցաւ խորհրդապատկերի բացման պաշտօնական արարողութիւնը: Օրուան հանդիսավար եւ շրջանի հիմնադրամի փոխ ատենապետ Արա Ալիշեանի հրաւերով հիմնադրամի յառաջիկայ թելեթոնի յաջողութեան համար իրենց օրհնութեան աղօթքը կատարեցին Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Գերշ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Կլէնտէյլի քաղաքապետ՝ պրն. Արա Նաճարեան:

Ելոյթ ունեցաւ նաեւ հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի վարչութեան ատենապետուհի Տիկին Մարիա Մեհրանեան: Ան յայտնեց որ այս տարուան հեռուստամարաթոնի հասոյթը պիտի յատկացուի սահմանամերձ գիւղերու զարգացման ծրագրին: Մասնաւորաբար նկատի առնուած են Տաւուշի շրջանի

Պրուևոյի հրաւերին:

Այս առթիւ տեղի ունեցաւ եկեղեցական միացեալ արարողութիւն: Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ պատուիրակութեան կը նախագահէր Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, մասնակցութեամբ Հոգշ. Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեանի, Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտեանի եւ հոյլ մը արժանա-



Նման ձեռնարկներ ու հրատարակութիւններ նախապէս կատարուած էին եւ սակայն բոլորն ալ, թէեւ գնահատելի եւ օգտակար, եւ սակայն թերի եւ գիտական արժէքէ զուրկ էին, ինչպէս Ներսէս Արքեպս. Մելիքեթեանի Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա եւ Բ Գիրք, սպագրուած Շուշի 1903-1905, եւ Արսէն Արքեպս. Ղլտճեանի Կանոնագիրք Հայոցը, հրատ. Թիֆլիս, 1914 թուին: Անոնք ձեռագիրներու չէին դիմած եւ տարընթերցումները չէին կարդացած. նաեւ պատմական քննարկուածներու չէին ենթարկած Կանոնները: Այս երկուքը կանոններու պարզ եւ նոյնիսկ անկատար հաւաքածոներ էին միայն: Մինչդեռ Վազգէն Յակոբեանի գործը իր տարընթերցումներով կը հանդիսանար առաջնակարգ եւ անկրկնելի աշխատանք մը:

Իր ընդարձակ 80 էջոց ներածականով հեղինակը ցոյց տուած է թէ ո՞րքան ձեռագիրներու նկատառում եւ մանրակրկիտ համեմատական գործ անհրաժեշտ էր վերականգնելու համար Հայ Եկեղեցուց Կանոնագիրքը իր լրիւ բովանդակութեամբ, ցանկագրութիւններով

եւ տողատակերու բծախնդիր տարընթերցումներով, զայն յանձնել կարենալու համար Հայ Եկեղեցիին ու ազգին: Այստեղ պարտիմ իմ շնորհակալիքը յայտնել Տ. Մամբէ Ա. Քհնյ. Գուգուեանի, որ անցեալին անձամբ Երեւանէն իմ խնդրանքին վրայ բերած էր ու նուիրած Բ Հատորը: Ա Հատորը արդէն մօտս կը գտնուէր:

Պատմականը

Մինչեւ Օձնեցի Հայ Եկեղեցին իր սկզբնաւորութենէն ի վեր Հայոց Հայրապետներու կարգած ժողովներով կանոններ հաստատած էր, որոնք եկած հասած էին մինչեւ ութերորդ դար, երբ Օձնեցի, աստուածաբան եւ իմաստասէր Հայրապետ, գանոնք մէկ մատենի մէջ իմբագրած էր: Երբ Կանոններէն ոմանք նկատի ունենանք, կը տեսնենք թէ մինչեւ 5-րդ դարու երեսունական թուականները Հայ Եկեղեցին օգտուած է յունական եւ ասորական ծագում ունեցող կանոններէն: Իսկ երբ հայ պետականութիւնը 428 թուականին վերջ գտաւ, Հայ Եկեղեցին իր վրայ վերցուց պետական իշխանութեան պարտաւորութիւնները, մասնակից դառնալով Հայաստանի քաղաքական կեանքին:

Ասոր որպէս հետեւանք Հայ Եկեղեցին մինչեւ 8-րդ դար զարգացող իր կանոններու շարքը, որոնք կուտակուելով ի վերջոյ Օձնեցի Հայրապետի ձեռքով համախմբուեցան, նպատակ ունենալով դաւանանքի եւ ծիսական հարցերու մշակմամբ պահպանելու Հայ Եկեղեցուց ինքնուրոյնութիւնը ընդդէմ Քաղքեղոնիկ Բիւզանդիոնի: Հին հայ իրաւունքին վերաբերեալ կարեւորագոյն կանոնախումբը Շահապիվանի 20 կանոններն են եղած, Շահապիվանի 444 թուականի Յունիսի 24-ին գումարուած «առաջին համաշխարհային» ժողովի որոշումով:

Արշակունեաց թագաւորութեան անկումէն ետք բացառիկ կարեւորութիւն կ'ունենար այդ ժողովը, երբ հայ նախարարներու ներքին կուռններէն օգտուելով, Պարսից պետութիւնը կը խլէր անոնց ձեռքէն ամէն իրաւունք եւ հարկային ծանր ճնշումի կը մատնէր հայ ժողովուրդը, որուն կը յաջորդէր նաեւ հայոց կրօնափոխութեան փորձն ու վտանգը 450 թուականին, պատճառ դառնալով վարդանանց հերոսամարտին:

Կանոնագիրքի Ձեռագիրները

Արագ ակնարկով մը Ա Հատորին 700ի հասնող էջերուն վրայ կարելի կ'ըլլայ նկատել որ Վազգէն Յակոբեան օգտագործած է Երեւանի Մաշտոցեան Մատենադարանի 47 գրչագիր օրինակները, ինչպէս նաեւ 1098 թուականին գրուած Նոր Զուղայի վանքին պատկանող ձեռագիր լուսապատճենները, որոնք տրամադրուած էին Երջանկայիշատակ Վազգէն Ա Կաթողիկոսի ջանքերով: Հեղինակը այդ ձեռագիրները երկու խումբերու բաժնած է, մին 29 ձեռագիրներու շարքով, եւ միւսը՝ մնացեալ 18 ձեռագիրներու, տալով իւրաքանչիւր խումբի յատկանիշներն ու նկարագրականները, անոնց պատմութեան ընթացքին կրած փոփոխութիւնները, եւ անշուշտ գրութեան թուականները, որոնք 11-րդ դարէն մինչեւ 19-րդ դար կը հեռանային իրարմէ:

Յակոբեանի քննակումներու

արդիւնքն է եղած որ մէկ ձեռագիր 11-րդ դարէն կուգար, մէկ ալ՝ 13-րդ դարէն, երեք ձեռագիրներ 14-15-րդ դարերէն, եւ մնացեալը 17-19-րդ դարերէն: Առաջին հատորին մէջ ցանկագրուած եւ ստորեւ ընդօրինակուած 24 կանոնախումբերը երբ նկատի ունենանք, կը տեսնենք թէ մինչեւ 5-րդ դարու երեսունական թուականները Հայ Եկեղեցին օգտուած է յունական եւ ասորական ծագում ունեցող կանոններէն: Իսկ երբ հայ պետականութիւնը վերջ գտաւ 428 թուականին, Հայ Եկեղեցին իր վրայ վերցուց պետական իշխանութեան պարտաւորութիւնները, մասնակից դառնալով Հայաստանի քաղաքական կեանքին: Ասոր որպէս հետեւանք Հայ Եկեղեցին զարգացուց իր կանոններու շարքը, որոնք կուտակուելով ի վերջոյ Յովհաննէս Իմաստասէր Կաթողիկոսի ձեռքով կազմեցին Հայոց Կանոնագիրքի առաջին եւ միակ հաւաքածոն:

Կանոնախումբեր

Առաջին հատորի բնագրին կորիզը կը կազմեն Յակոբեանի իմբագրած հետեւեալ 24 կանոնախումբերը.
1. Սահմանք եւ կանոնք գոր եղին աշակերտքն Քրիստոսի
2. Երկրորդ Առաքելական Կանոնի կղեմեաի
3. Կանոնք յետ Առաքելոց Հա-

- րանց
4. Կանոնք Նիկիական
5. Կանոնք Անկիւրեայ
6. Կանոնք Կեսարեայ
7. Կանոնք Նէոկեսարեայ
8. Կանոնք Գանգրայ
9. Կանոնք Անտիոքայ
10. Կանոնք Լաւողիկեայ
11. Կանոնք Սրբոյն Գրիգորի
12. Կանոնք Սարդիկեայ
13. Կանոնք Կ. Պոլսոյ Ժողովոյն
14. Կանոնք Եփեսոսի Ժողովոյն
15. Կանոնք Աթանասի
16. Կանոնք Բարսեղի
17. Կանոնք Ս. Սահակայ Հայոց Հայրապետի
18. Հայոց Կանոնիս Շահապիվանի
19. Թուղթ Սեւանտեայ Եպիսկոպոսի
20. Կանոնք Ներսէսի Կաթողիկոսի եւ Ներշապոյն Մամիկոնեցի Եպիսկոպոսի
21. Կանոնք Յովհաննու Մանրակունուց Հայոց Կաթողիկոսի
22. Կանոնք Աբրահամու Մամիկոնեցի Եպիսկոպոսի
23. Կանոնք վերջնոյ Սահակայ Կաթողիկոսի
24. Կանոնք Տեառն Յովհաննիսի Իմաստասիրի Հայոց Կաթողիկոսի:
Հայ հին իրաւունքին վերաբերեալ կարեւորագոյն կանոնախումբերը

Շաք.ք էջ 19

Blue Cross of California takes the worry out of health care.

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company

Call now and let me help take the worry out of your health care!

HARUT DER-TAVITIAN
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDAL, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

BlueCross of California
The Power of Blue.™

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

ՄՈՒԱՅԻՆ ՊԱՐՏԵԸ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Գարնան եղանակի սկսվելու օրերն էին, բնութեան եւ օդի որոշ փոփոխություններ էր նկատվում քաղաքում: Փողոցների չինարի եւ տարբեր ծառերի սկզբի ճիւղերին նկատվում էին ուռուցիկ պտուկներ, որոնք ընծիւղվելու նշան էին, որպէսզի նրանք ծիւրեր արձակէին, տերեւների եւ սաղարթների վերածուկներ, կարիք կար օդի բարենպաստ ջերմություն, սակայն դեռ ձմեռը իր ձիւղով առեւտրելով ծանր էր նստել մեր շրջակայ լեռների վրայ, սպիտակափառ ձիւղը պատկերում էր ջինջ կապուտակ երկնքում լիավառ արեւի ճառագայթումով: Օրեր առաջ ձմեռն տեղալուց փողոցներում տակաւին նկատվում էր պատահիկներ ծմակ վայրերում: Օդը դեռ ցուրտ էր, մարդիկ հագնուած էին տաքուկ: Բնակարաններում վառարանները բոցկլտում էին ջերմություն սփռելով:

Դաւիթն էր բնակարանում յատուկ աշխուժութիւն էր նկատուում, հաւաքուէլ էին մօտիկ հարազատները: Նրանք պատրաստուած էին գնալ երկաթուղու կայարան Հայկին դիմաւորելու, որը Հայաստանից էր ժամանելու կնոջ հետ միասին: Հայկը 1960 թվականին մէկ քոյր եւ երկու եղբայրներին թեհրան թողնելով ընտանիքով գաղթել էր Հայաստան, նա պարուծ էր Աբովեան քաղաքում: Վերջապէս ամիսներ սպասելուց նրան յաջողուել էր եղբոր` Դաւիթի, հրաւերով թեհրան ձամբորդել 1985 թվի Մարտ ամսում:

25 երկար տարիներ է եղբորս` Հայկին եւ եղբոր կնոջս` Սաթենիկին, չեմ տեսել, Աստուած գիտի որքան եւ կարօտել նրանց, Դաւիթն էր, նա խօսում էր իր քրոջ ամուսնու` Սերոփի, հետ:

Դաւիթը վաթսուների վերել տարիք ունէր, նա նիհարակազմ էր եւ ճերմակալած մագերով, սակայն համակրելի տեսքով, խոշոր սեւաթոյր աչքերով, ցախաւել յոնքերը աչքերին հովանի, միջհասակ կազմուածքով, նա փորձուած ու խոհուն մարդու տպաւորութիւն էր թողնում, ծնողների անդրանիկ գաւակը լինելով` շատ նեղութիւններ էր քաշել քոյր եւ եղբայրների համար, նրանց կորցնելուց յետոյ: Նա տքնաջան աշխատանքով կարողացել էր բարեկեցիկ վիճակ ստեղծել իր ընտանիքի համար: Նա իրեն երջանիկ էր զգում, ունէր երկու տղայ եւ մէկ աղջիկ, բոլորն էլ ամուսնացած էին, ունէր թոռներ: Նա իր սրտցաւ եւ կարեկից հոգեբանութեամբ վայելում էր ընտանիքի եւ շրջապատի սէրն ու յարգանքը:

Միայն դու չես կարօտել Դաւիթ, ես ու Արեգնազանն էլ` նոյնպէս: Էն օրուանից որ այս տան փեսան եմ դարձել, ձեր գովասանքների հիման վրայ, խիստ ցանկութիւն է առաջացել իմ մէջ Հայկին հանդիպելու համար:

Արշակն էլ էն կողմից խօսակցութեան մէջ մտաւ, նա Դաւիթի միջնակ եղբայրն էր, վաթսուների ոչ աւելի տարիքով, ճաղատ դարձած գլուխով եւ հնչեղ ձայնով:

Իրականութեամբ ամենքս ենք կարօտել մեր եղբորը, չէղում էք, թէ ինչպէս իր որոշումի վրայ յամառ ու անխախտ մեզ թողեց ու գնաց, ինչ ասեցինք Հայկ, մի քանի տարի էլ համբերիր, երեխէք մի քիչ մեծանան, յետոյ բոլոր միասին կը գնանք, մեզնից ասել ու

իրենից չլսել, հակառակում էր ասելով:

25 աղբերներ եւ քոյր Արեգնազան Չան, հագիւ ա Հայաստանի ձամբէն բացուել, տեսար յանկարծ նորից կողպուեց, ինչ ենք անելու, մեր ողորմած հոգի հէրն ու մէրը հայրենիքի կարօտը սրտներում այս աշխարհից հեռացան, չէ ես գնում եմ, էն մեր հայրենիքն ա, էն մեր յոյսն ա, երեխէքս ընտեղ դպրոց կ'երթան, մարդ կ'ըլլեն, կը ծառայեն մեր երկրին:

Արշակն չիշելով Հայկի տրամաբանութիւնը հայրենիք մեկնելու առիթով յուզումնալից երանգով աւելցրեց.

Նա իր համոզիչ խօսքերով բոլորիս ձէնը կտրել էր տալիս, երանի մենք էլ հէնց էն օրերին հայրենիք գնալինք եւ վերջ տալինք մեր այս անորոշ վիճակին, էս ներկայ սեւ ու խաւար օրերին չհանդիպէինք, իսկապէս եթէ հայրենասէր ենք եւ ուզում ենք մեր պայտերի կտակը իրականանայ, պէտք է Հայկի պէս վճռակամ որոշենք եւ գնանք մեր երկիրը, չէ՞ որ արտերկրում անկշռելի էնէրգիա եւ ահագին գումարներ ենք ծախում մեր իսկութիւնը պահելու համար: Այդ բոլոր ճիգ ու ջանքը եւ դրամական ներդրումները կը դրուի հայրենիքի բարգաւաճման ձամբին, թէ հայրենիքը կը զարգանայ եւ թէ մենք իսկական հայ սերունդներ կունենանք:

Արեգնազանը չհաւանելով Արշակի օրուաչ ծրագրին չառնչուող խօսակցութիւնը անհամբեր ազդանշան տուեց դադարեցնելու եւ պատրաստուեն գնալու:

Ինչ էք հին օրերը քրքրում եւ ժամանակ կորցնում, վեր կացէք, էրթանք, յանկարծ աղբերս ու աղբերկինս չգան եւ մենք ընտեղ չըլնենք, նրանք կը կորսուեն, յետոյ անպատուութիւն կըլնի: Նրանց գնալու օրից մինչեւ մեր օրերը քաղաքը շատ է փոխուել ու մեծացել, փողոցների եւ պողոտաների անուններն էլ փոխուել են, մէկը միւսի յետեւից իսլամական իմամների եւ պատերազմում զոհուած նահատակների անուններ են ստացել` առանց խտրութեան հայ նահատակ գինուորներինը նոյնպէս: Սերոփը զգուշացրեց կնոջը, որ չաճապարի:

Ինչ ես վազում ա'յ կնիկ, երկաթուղին ուշանալու ա, կէսօրից յետոյ վեցին կը հասնի, հիմա ժամը երկուսն ա, չորսին էստեղից կը ճանապարհուենք:

Խօսակցութիւնները ջերմ շարունակուեց առաւելաբար հին եւ նոր օրերի բաղդատականը ներկայացնելով:

Ինչ խաղաղ օրեր էին 1960 թվականներին, այս օրերի նման երկրում պատերազմ չկար, ճիշտ է չկալութիւն, անգործութիւն եւ պարապութիւն էր, բաց յոյս կար, որ լաւ կըլնի: Արշակն էր իր հնչեղ ձայնով մեկնաբանութիւններ անելով:

Արշակին անմիջապէս երկրորդեց Դաւիթը:

Իսկապէս ով էր գուշակում, որ Շահի հօր վարչակարգը մի քանի ամիսներում հոգեոցն հանգուցելոց կարդայ եւ վերջ գտնի: Սերոփը չհամբերեց, անմիջապէս իր կարծիքն յայտնեց:

Ինչ հօրութիւն, ինչ մեծութիւն, փչած փուշկի էր նման օտարների ձեռքում, տեսաք թէ ինչպէս փաքեց, ժողովրդի յախուեն ընդվզման դէմ յանդիման կանգնե-

լով քաս է քուզէն (վէշ-մէշը) հաւաքեց ու գնաց:

Արդարեւ 1979 թվականը անկիւնադարձային հսկայ նշանակութիւն ունեցաւ իրանի պատմութեան մէջ: Ժողովուրդը իսլամական բուեն ցանկութիւններով, միասնական ու միակամ, տարուելով աղայէ Խոմէյնու քարոզներով, խոստումներով ու ճառերով, նրան սիրով ընդունեց երկրի եւ կրօնական առաջնորդ ու կործանեց Շահի վարչակարգը: 29 տարիների երկարութեամբ կրօնական վարչակարգը գնում է, որ թեւակորի իր գոյութեան երեսուն տարիները դիմակայելով տարատեսակ դժուարութիւններ:

Կանայք չէին մասնակցում զրոյցին, նրանք առանձին շուրջ բոլոր գբաղուած էին ընթրիքին մատուցուելիք կերակուրների եւ աղանդերների պատրաստութեամբ, մէկ-մէկ էլ փոխն ի փոխ թէջ հրամցնելով տղամարդկանց:

Արդէն կէսօրից յետոյ ժամը չորսն էր, երբ Դաւիթի տիկին` Հրանուշը, զգուշացրեց տաք խօսակցութեան մէջ մտած այրերին գնալու համար:

Ես կարծում եմ, ժամանակն է, որ գնանք, Մաջիդուց մինչեւ երկաթուղու կայարանը երկար ձամբայ է, մանաւանդ որ պարսկական նոր տարուաչ տօնական օրերի սեմին մարդկանց գնումներ կատարելու պատճառով ձամբաները ժխորուած են լինում մեքենաներով:

Դաւիթն ու իր կինը` Հրանուշը, Արշակն ու Նուարդը, Սերոփն ու Արեգնազանը կազմ ու պատրաստ սնից դուրս ելան, կանայք ոտքից մինչեւ գլուխ ծածկուած, միայն երեսները բաց, իսկ տղամարդիկ առանց փողկապի, որովհետեւ օր-

ուայ պայմանները դա էր թեյաղրում: Իսլամական վարչակարգը ի սկզբանէ խիստ հետեւում է կրօնական կանոնների գործադրման, որոնցից կարելի է թոռել` կանանց ծածկուելը, ողբելից խմիչքների արգելումը, խաղավայրերի(կազինոների) փակումը եւ այլն:

Արեգնազանը նրանց լիշեցրեց. Նրանց դիմաւորելու համար ծաղիկ կ'ուզենք:

Սամսոնը նրանց վստահեցնելով թէ.

Կայարանի մօտակայքից կը գնենք, մի' մտահոգուէք:

Հիւրընկալ Դաւիթն ու Հրանուշը առանձին իրենց մեքենայով, իսկ միւս չորս հոգին Սամսոնի մեքենայով բարով խէրով շարժուեցին դէպի երկաթուղու կայարանը:

Երկու իրանական սարք` Փէյքան, մեքենաները իրար հետեւելով առաջ էին ընթանում թեհրանի պողոտաներից, դրանով հանդերձ որ երկրի հարաւային սահմաններում թէժ կուր էր գնում իրաքի դէմ, սակայն թեհրանում կեանքն իր հուսով էր գնում խաղաղ ու անվրդով, միայն երկրի լրատուական գործակալութիւնները անընդմէջ հադրողումներ էին կատարում ճակատներից ժողովրդին իրազեկ դարձնելով անց ու դարձից:

Հակառակ նրան որ Մարտ ամիսը գիժ ամիս է` փոթորիկներով, ամպրոպներով եւ յորդ տեղատարափներով, սակայն այսօրը հրաշալի գեղեցկութեամբ ծծողուն օր էր, միայն օդը պաղ էր ու սարսուցնող:

Երկու դիմաւորող մեքենաները ժամանակին հասան երկաթուղու կայարանը: Մեծ խոնում կար ընդունարանի հսկայ դահլիճում,

Շար.ք էջ 16

PEACE through MUSIC and DANCE

Ending Hate • Giving Hope • Bringing Joy




The Pasadena Human Relations Commission presents:




A Memorial Concert in Honor of Darfur Sudan

September 29, 2007

Saturday, 7:30 pm

At the First Church of the Nazarene of Pasadena
3700 E. Sierra Madre Boulevard,
Pasadena, California 91107







Master of Ceremonies
JURNELL CHATMAN
NBC 4 News Reporter

Tickets \$15 at the door or by phone (seniors & students \$10)
Contact Nat Nehdar at (626) 351-8680; Human Relations Commission (626) 744-4234
Deadline for phone orders is September 15, 2007.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԸԱՄԱԺՈՂՈՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ԸԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆՅ ՆՈՅՏԵՄԲԵՐ 28-30, 2007 ԿԼԵՆՏԵՅԼԻ ՄԷՋ

Փիլիսոփայութեան հարցերու նուիրուած Միջազգային Երրորդ Համաժողովը տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 28-30 օրերուն Կլենտէյքի մէջ՝ կազմակերպութեամբ Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի:

Համաժողովին ընդհանուր նիւթն է «Փիլիսոփայութեան եւ Մեթափիլիսոփայութիւն (Փիլիսոփայութեան Անդին)» Ժամանակակից մտածողութեան ծիրէն ներս: Բացի բացման ընդհանուր ժողովէն, տեղի պիտի ունենան զանազան նիստեր մասնագէտներու կողմէ յատուկ հարցեր քննարկելու, կարծիքներ փոխանակելու եւ առաջարկներ ներկայացնելու: Կայ նաեւ մասնաւոր նիստ մը՝ մասնակցութեամբ երիտասարդ գիտնականներու, որոնք Ժամանակակից գիտութեան նոր տուեալներով պիտի ներկայացնեն այժմէական հարցեր: Զեկուցաբերներ պիտի ըլլան Միացեալ Նահանգներէն, Հայաստանէն, Յունաստանէն, Արժանթին:

նէն եւ այլ երկիրներէ: Զեկուցներ պիտի ներկայացուին հետեւեալ հարցերու մասին - Փիլիսոփայական Գիտութեան Մակարդակներ - Հնարաւոր են, Քանթի Մեթափիլիսոփայութիւնը, Ժամանակակից Արժանթինեան Փիլիսոփայութիւնը, Ամերիկեան մեթափիլիսոփայութեան Անդերադարձումի Արմատները, եւ այլն նիւթեր:

Համագումարը կազմակերպուած է գործակցութեամբ Սթանֆորտ Համալսարանի, Քալիֆորնիոյ Համալսարանի (Պըրքլի), Երեւանի Սլաւոնական Համալսարանի, Մեթափիլոզոֆի հանդէսի, եւ Պլաքուէլ Հրատարակչատան (Մեծն Բրիտանիա եւ Միացեալ Նահանգներ): Փիլիսոփայութեան Միջազգային Ակադեմիայի Նախագահն է փրոֆ. Գէորգ Բրուտեան (Հայաստան, համանախագահները՝ Փրոֆ. Պէրի Սթրաուս (Քալիֆորնիոյ Համալսարան), եւ Էւանիլեյու Մուցոփուլու (Յունաստան):

ԻՐԱՆԱԸԱՅ ԲԱՐԵՐԱՐ ԼԵՒՈՆ ԱՇԱՐԽԱՆԻ ԲԱՅԱՌԻԿ ՆՈՒԵՐՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՒԻՆ

Օգոստոս 22ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերար Լեւոն Ահարոնեանի կողմից յանձնուեցին Նորին Սրբութեան, ինչպէս նաեւ երջանկայիշատակ Վազգէն Ա., Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսներու պատկերներով ձեռագործ բոգեղեններ:

Պրն. Ահարոնեան իր խօսքում նշեց, որ շուրջ 18 ամիսների ընթացքում դրանք պատրաստուել են թաւրիզի լաւագոյն մասնագէտների կողմից: Նա յաւելեց նաեւ, որ

մեծ նուիրումով եւ ուրախութեամբ է յանձնում այդ ամէնը Նորին Սրբութեանը: Հանդիպման աւարտին Ամենայն Հայոց Հայրապետն օրհնութեան իր խօսքն ուղղեց ներկաներին: «Մենք մեր գնահատականն ենք բերում Ձեզ՝ Ձեր որդիական նուիրումի եւ սիրոյ համար, որ ցուցաբերել եւ ցուցաբերում էք առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Բազում օգտակարութիւններ էք ունեցել նրա առաքելութեանն ի նպաստ եւ շարունակում էք օգտակար ծառայութիւններով շէնացնել եւ բարեգարգել Մայր Աթոռը», - ասաց Նորին Սրբութիւնը:

ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ

Կիրակի, Սեպտեմբեր 16ին, Վերացման Սուրբ Խաչի Տօնին, առաւօտեան Պրպէնքի Առաջնորդարանին մէջ հանդիսաւոր Սուրբ Պատարագ մատուցեւ օրուան խորհուրդին մասին ոգեւորիչ քարոզ մը տուաւ Առաջնորդ Սրբազան Հայրը: Արարողութեան մասնակցեցան Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտըմեան, Մուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Զելլէեան, Առաջնորդարանի Դիւանապետ՝ Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Մխսեան, Սան Վէլիի եւ Նորթ Հայրիվուտի Մէկ Մասի Այցելու Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Զաւէն Քհնյ. Մարկոսեան, Սանթա Գլարիթայի եւ Վենթուրա Գաւառի Հայց. Եկեղեցւոյ Այցելու Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Յովէլ Քհնյ. Օհանեան:

Մեծ թիւով հաւատացեալներ Սուրբ Հաղորդութիւն ստացան: Սուրբ Պատարագի աւարտին կատարուեցաւ Խաչվերացի Աւանդական Անդատանի արարողութիւնը: Կիրակի, Սեպտեմբեր 16ին Օգլընտի Համբարձման Յոյն Օրթոտոքս Տաճարի Սրահին մէջ տեղի ունեցաւ յատուկ ընդունելութիւն եւ ճաշկերոյթ՝ ի պատիւ Գերշ. Մեթրոպոլիտ Նիքիթասի, որպէս Վարիչը Օրթոտոքս Հիմնարկի: Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ ներկայ գտնուեցաւ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Քհնյ. Փեթրոյեան եւ իր շնորհաւորութիւնները յայնեց բարձրատիճան հոգեւորականին եւ բարի գալուստ մաղթեց իրեն:

Ա. Մ. ՅՈՎԱՏՓԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԵՐԱՍՈՒՏԸ

Շաբաթուազուած էջ 8-էն

արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Սեպտեմբեր 8ին եւ խնդրեց աշակերտներէն ու ծնողներէն որ խուճախեալ շաբթուայ ներկայ գտնուին սոյն արարողութեան, որը լաւագոյն առիթը պիտի հանդիմանայ ամրապնդելու մեր հաւատքը եւ յայտնելու մեր երկիւղածութիւնը դէպի ամենակարող Աստուած: Տնօրէնին խօսքէն ետք, մեր նախկին տարեշրջանի շրջանաւարտ աշակերտ եւ Աշակերտական Խորհուրդի անդամ Մեւակ Ղազարեանը, խօսք առնելով, իր հրաժեշտի խօսքին կողքին, խրատեց աշակերտները ընելու ու տալու իրենց լաւագոյնը, որ կարենան յաջողիլ ու փառք ու պատիւ բերեն իր

սիրելի դպրոցին: Աշակերտները խանդավառութեամբ բարձրացան իրենց դասարանները, դաստիարակ ուսուցիչներու առաջնորդութեամբ, իսկ ծնողները գոհունակ սրտով բաժնուեցան իրենց զաւակներէն, վստահ ըլլալով որ իրենց զաւակներու դաստիարակութիւնը յանձնուած է արհեստավարժ տնօրէնութեան ու ուսուցչական կազմի մը հոգատարութեամբ: Բարի երթ ու նորանոր շոգուիւններով լեցուն տարեշրջան մը կը մաղթենք մեր վարժարանին:


Թղթակցութիւնը՝ Լիզա Մանոյեան Լուսանկարները՝ Իվէթ Խ. Մանկրեան

ՄԵՐՏԻՆԵԱՆ ԸԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԵՐԱՍՈՒՏԸ

Շաբաթուազուած էջ 8-էն

Պրն. Տէմիրճեան նախ շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ որ Մերտինեանը Հարաւային Քալիֆորնիոյ լաւագոյն դպրոցներէն մէկն է. երախտագիտութեամբ յիշեց Շարլոթ եւ իյիզ Մերտինեան քոյրերը, որոնք ժողովրդականութեամբ ապրելով՝ իրենց ամբողջ խնայողութիւնը նուիրած էին, որպէսզի լոյսի նոր օճախ մը հիմնուի: Նոյն երախտագէտ ոգիով յիշեց դպրոցի բոլոր բարերարներն ու նուիրատուները:

Պրն. Տէմիրճեան շեշտեց ուսման կարեւորութիւնը, որ քաղաքակրթութեան հիմնաքարն է: Ապա իր խօսքը ուղղեց աշակերտներուն ըսելով՝ «Գիտե՛ք որ ձեր ծնողները մեծ գոհողութիւն կ'ընեն ձեզ հոս, այս դպրոցը դրկելով»: Եւ ան թելադրեց որ իրենց երախտագիտութիւնը յայտնեն աշխատասիրութեամբ եւ օրինակելի քաղաքացիներ ըլլալով: Փակման խօսքը կատարեց տնօրէնը՝ Պրն. Յովսէփ Ինճէճիքեանը: Ան ուրախութիւն յայտնեց որ Մերտինեանի շրջանաւարտները յաջողութիւն կ'արձանագրեն ուրիշ դպրոցներու եւ համալսարաններու մէջ, շնորհիւ այս դպրոցէն ներս անոնց ստացած քրիստոնէական դաստիարակութեան, ուսումնական մակարդակի եւ հայերէն լեզուի որակաւոր դասաւանդութեան: Ապա, ան ուրախութեամբ տեղեկացուց 2007 Մայիսին տեղի ունեցած SAT-10 քննութեանց մէջ աշակերտներուն արձանագրած յաջողութիւնները, Մերտինեան կայքէջի՝ website-ի դրութեան համար տարուած աշխատանքները, նոր շինքի ծրագրին մասին hearing-ի դրական անդրադարձը եւ յոյսը՝ որ շուտով արտօնագիրը կը ստացուի ու շինարարութեան աշխատանքները կը սկսին: Ան եզրափակեց՝ «Հազար մեթր վազքը առաջին քայլով կը սկսի» խօսքով: Պրն. Ինճէճիքեան ապա ներկայացուց անձնակազմի նոր ու նախկին ուսուցիչ-ուսուցչուհիները ինչպէս նաեւ պաշտօնէութիւնը: Հանդիսութիւնը վերջ գտաւ Վեր. ձէյսըն Մաթոսեանի օրհնութեան աղօթքով: Ապա, դաստիարակներու առաջնորդութեամբ, աշակերտները ուրախ տրամադրութեամբ ուղղուեցան իրենց դասարանները, սկսելու համար ուսումնական նոր տարեշրջանը: Նախամանկապարտէզի վերա-



Տնօրէնը՝ Յովսէփ Ինճէճիքեան

մուտը եւս տեղի ունեցաւ նոյն օրը, ժամը 9:30ին: Պրն. Ինճէճիքեան ողջունեց փոքրիկներն ու անոնց ծնողները: Ան տուաւ տեղեկութիւններ դպրոցին արձանագրած յաջողութիւններուն մասին: Ապա, հրաւիրեց նախամանկապարտէզի պատասխանատուն՝ Տիկ. Մակի Թովմայեանը, որ բարի գալուստի խօսքեր ընելէ ետք, ներկայացուցի ուսուցիչները եւ հրաւիրեց զանոնք որ իրենց աշակերտներուն անունները տալով՝ դասարանները ուղղուին: Կրթական նոր տարեշրջանին համար լաւագոյն մաղթանքներ ընելով, ծնողներ վերադարձան իրենց աւօրեային, իսկ աշակերտներուն համար կը սկսէր նոր տարի մը, որու ընթացքին անոնք պիտի զարգանային «իմաստութեամբ, հասակով եւ Աստուծոյ մը մարդոցմէ շնորհ գտնելով»: Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը 1982էն ի վեր կը ծառայէ Քալիֆորնիահայ համայնքին, ջամբելով ոչ միայն ուսումնական բարձր մակարդակի գիտելիքներ, այլ նաեւ հայեցի դաստիարակութիւն: Քրիստոնէական կրթութիւն: Աստուածավախ միջավայրի մէջ ջամբուած ազգային ու կրօնական ամուր հիմքերու վրայ խարսխուած դաստիարակութիւնը, մեր նորահաս սերունդին մէջ կը կերտէ առողջ նկարագիր ու հօգոր ինքնութիւն: Վարժարանը վարկաւորուած է Դպրոցներու եւ Հայամասրաններու Արեւմտեան Ընկերակցութեան կողմէ - Western Association of Schools and Colleges (WASC): Վարժարանի մասին յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել (818) 907-8149:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԸՆՈՒՋԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ՍՈՌԱՅԻԱԾ ՊԱՐՏԵՐ

Շարունակում է 14-ին

նստարաններն ամբողջութեամբ գրառուած էին, շատ-շատերը ոտքի վրայ, բոլորակ շրջանակ կազմած, ճամպրուկները մէջտեղում, սպասողական դրութեան մէջ, ուրիշներ ծաղկեփունջը ձեռքներին դէպի կառամատոյց կ'իջնէին, ամէն կողմ շարժում, մարդկանց տեղափոխութեան եւ բարձր խօսակցութեան ձայներ, այնպէս որ հագիւ կը լսուէր բարձրախօսի յաճախակի յայտարարութիւնները: Զուլֆա-Ատրպատական-Թեհրան ժամանած երկաթուղին, բազմաթիւ սալակներով իրար օղակցուած, քիչ առաջ էր արգելակել իր ընթացքը: Գնացքի դռների առջեւ մարդիկ խմբուեցին ծաղկեփունջեր ձեռքներին, հայեացքները յառած դռներից ցած իջնող ճամբորդներին: Այդ հակաբազմութեան արանքներում նկատուեց մեր հայ խմբակը ձեռքի բռնակները նման քով-քովի միատեղուած, այդ ամբողջ դիմաւորողների մէջ միակ հայերը նրանք էին, կային նաեւ բաւական թուով ուսաներ, որոնք առանձնանում էին իրենց տեսքով ու խաժ աչքերով: Ամէն անգամ որ մի ճամբորդ երկաթուղուց ոտք էր դնում դուրս, բարի գալստեան ուրախ կանչերով մի ալիք նրա հետ յորձանքից պոկուում էր թեթեւացնելով ճնշումը ամբոխի: Այսպէս յաջորդական խանդավառ գոչիւններով աստիճանաբար դատարկում էր հրապարակը մարդկանցից, սակայն մեր հայերը աչքները շուր կտրած շփոթ իրար էին նայում, Դաւիթը կասկածանքով դարձաւ միւսներին ասելով.

-Չլինի մենք սխալ ենք հաս-

կացել Հայկի գալու օրը.
 Արեգնագանը անմիջապէս կասկածանքը փարատելու համար միջամտեց.
 -Չէ՛ աղբեր ջան, հեռագրի մէջ էսօր է գրուած, դեռ բոլոր ճամբորդները չեն դուրս եկել, տեսնում էք, տակաւին ուրիշներ սպասում են, մի՛ վազէք, համբերատար եղէք, նրանք եւս կը գան: Նրանք լուռ աչքները մեխած դռան սպասեցին, ինչ տեսնեն, էդ ընդհանր Արեգնագանը բարձրադաղակ.- աղբեր ջան, ասելով վազեց դէպի նրանց, որոնք յայտնուել էին դռան առջեւ, միւսները անյայտ հետեւեցին Արեգնագանին, ինչ կարօտագին համբույրներ.
 -Մատաղ ըլնեմ քեզ Հայկ ջան, թո՛ղ, թո՛ղ, էրէսդ պաչեմ, աչքերդ պազնեմ իմ սրտագին աղբերս, ա՛խ, ինչքա՛ն էի կարօտել քեզ, գալուստդ բարի լինի սիրելի աղբերս.
 Արեգնագանը այնքան սիրագեղ եղբորը գրկել ու համբուրում էր, որ մոռացել էր շրջապատին, այնպէս որ Դաւիթը նկատողութիւն արաւ.
 -Աղջի՛, բաւական է, թող մենք էլ ողջագուրուենք մեր աղբօր հետ: Արեգնագանը պոկուելով եղբորից գրկախառնուեց Սաթենիկի հետ եւ նոյն ոգեւորութեամբ սկսեց համբուրուել նրա հետ.
 -Բարի ես եկել, իմ չքնաղ Սաթենիկ, մատաղ ըլնեմ ձեր բոյին, շատ ուրախ եմ, որ առողջ ու առաջուայ նման սիրուն եմ տեսնում քեզ, աշխարհի չափ կարօտել էի ձեզ, փառքդ մեծ Աստուած ջան, որ աղբօրս ու աղբրկնկաս տեսայ: Արեգնագանը տան միակ աղ-

ջիկ եւ կրտսեր գաւակն էր, գեղեցիկ եւ փարթամ կազմուածքով երիտասարդ կին էր, նա Սերոփին սիրելով ամուսնացել էին իրար հետ քաղցր օջախ կազմելով՝ բախտաւորուելով երեք գաւակներով:
 Շրջապատի մարդիկ զարմացել էին այդքան գեղուն սէր ու գուրգուրանքի ակնատես լինելով, անշուշտ նրանք չգիտէին, որ 25 տարիների անտես հեռաւորութեան բոլոր կարօտի գագաթների անգուսպ բխումն էր: Սերոփը այս վիճակից փրկելու համար գգուչացրեց.
 -Այ կնի՛կ, աղբերնե՛ր, բաւական է էդքան գրկէք ու համբուրուէք, արէ՛ք, դնանք տուն, մենք բոլորս դարձել ենք թատերաբեմի խաղացողներ եւ շրջապատը՝ հանդիսականներ, տե՛ս, ինչպէս մարդիկ ակնապիշ մեզ են դիտում:
 Նրանք գգուչանալով Սերոփի նկատողութիւնից առաջ շարժուեցին Հայկին եւ Սաթենիկին իրենց միջեւ ձեռքները կանխած:
 Հայկին ու Սաթենիկը բարձրահասակ եւ վայելչակազմ արտաքինով, կարմիր եւ կազդուրուած դէմքերով բոլորի ուշադրութիւնն էին գրաւել: Հայկը վաթսուսին չհասնող տարիք էր ցոյց տալիս, կարելի է ասել Սաթենիկը մի հինգ տարով փոքր, նա իմանալով երկրի կարգ ու կանոնը գլխաշորով եւ ծածկուած հագուստով էր ներկայացել:

Արեւն արդէն մայր մտնելու վրայ էր, երբ նրանք մեքենաները նստած ճանապարհուեցին դէպի տուն: Օդը ցուրտ էր ու քամոտ, ամէն կողմ նկատուում էր մարդկային եւ ու գեռ, վաճառատների լոյսերը աչք շրջնող փայլփայլների ու զարդարանքների տակ անցողների ցանկութիւններն էին գրգռում: Ինքնաշարժերը վալիէսար (Փահլաւի) պողոտայից դանդաղ էին առաջ գնում, մօտալուտ Նով Ռուզի գալը ճամբաներում առաջացրել էր խճողում: Արդէն իսկ գիշեր էր եւ երկնքում հատ ու կենտ աստղեր էին երեւում: Նկատելով դեռ ձմռան օրեր են, թեհրանի օդը մնում է տանելի քամիներ փչելու հետեւանքով, սակայն ամուսն ժամանակ դառնում է հեղձուցիչ՝ բազմահագար մեքենաների երթեւեկութեան պատճառով:
 Մեքենաները մէկը միւսի յետեւից հասնում են դռան առջեւը, լուսավառուած բնակարանից դուրս են թափում մեծ ու պզտիկ դիմաւորելու հայաստանցի հարազատներին: Փողոցում գոյանում է մարդոց մեծ խումբ, հնչում են ողջոյնի եւ բարի գալստեան ձայներ.
 -Բարի էք եկել մեր սիրելի հայաստանցի հարազատներ, մեր մայր հայրենիքի հոտն ու բոցն էք բերել ձեզ հետ:

(Շարունակելի 1)

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 Email: massis2@earthlink.net



Wahib's
 MIDDLE EAST RESTAURANT
 الشرق مطعم
 MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION

FAMILY ENTERTAINMENT
 BANQUET HALL
 EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT
 INTERNATIONAL ~ ARABIC
CALL FOR RESERVATION





MOUHAMAD SALEM
 & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

BELLY~DANCING

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
 TEL 626-281-1006 626-587-1048
 FAX 626-281-3641

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ
Proud Past



Լուսաշող Ապագայ
Exciting Future

AGBU SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE

Proudly Presents the 4th Annual

AGBU SOCIETY DINNER



Honoring

YENOVK BALIKIAN

AGBU Honor Member,
for his outstanding services and
total dedication to the AGBU.

Keynote Speaker
State Senator

JOE SIMITIAN

California State Senate



Saturday, October 13, 2007 – 7PM

HUNTINGTON RITZ CARLTON HOTEL

DONATION \$1,000 (2 tickets)

For more information, call: 626.794.7942

KHACHIK ABRAHAMYAN ASHOT AVAGYAN GAREGIN DAVTYAN MARINE DILANYAN HERMINE DEMIRTSHYAN GAGIK GHAZANCHYAN ALBERT HAKOBYAN MAYIS MKHITARYAN LILIT SOGHOMONYAN

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION, SOUTHERN CALIFORNIA DISTRICT COMMITTEE PRESENTS

9 CONTEMPORARY ARTISTS FROM ARMENIA

AN EXTRAORDINARY ART EXHIBITION

FRIDAY, SEPTEMBER 28, 2007, 7-11PM
SEPTEMBER 29 & 30, 3-10PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN ST., PASADENA, CA 91104
TEL 626.794.7942

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնութեան 20-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 2 columns: Team Name, Score. Rows include Բանանց - Գանձասար (3-0), Կիլիկիա - Փիւնիկ (0-2), Միկա - Արարատ (4-1), Ուլիս - Շիրակ (2-0)

Խումբերու դասաւորումը

Table with 7 columns: Rank, Team, W, D, L, Goals, Points. Lists teams like Փիւնիկ, Արարատ, Գանձասար, Միկա, Բանանց, Շիրակ, Ուլիս, Կիլիկիա with their respective stats.

ՅՈՒՆԱՅՈՒՍԵԱԿԱՆ ՈՃԻ ԸՄԲՇԱՍԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

Պաշտօնը ընթացող յունահունական ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնութեան առաջին օրը Հայաստանից մրցագործ դուրս եկան 55կգ, 60կգ եւ 66կգ քաշայինները: Ռոման Ամոյեանը 55 կգ քաշային կարգում եւ 60 կգ խոսրով Մելիքեանը պարտուել էին արդէն 1-ին փուլում: Պայքարը շարունակում էր միայն 66 կգ Արման Աղիկեանը: Այս ըմբշը յաղթահարելով նախնական փուլերը դուրս եկաւ կիսաեզրափակիչ, բայց պարտուեց: Աղիկեանը պարտուեց ֆրանսացի Սիթլ Ժենոյին: Յաւօք Աղիկեանը պարտուեց նաեւ բրնձի մեղալի համար մրցամարտում եւ բաւարարուեց միայն 4-րդ տեղով: Ամէն դէպքում Արման Աղիկեանը նուաճեց 2008թ. Պեկինի օլիմպիական խաղերի ուղեգիր:

Մրցապայքարի եկրորդ օրը 74 կգ քաշային Արսէն Զուլֆալախեանը առաջին փուլում բելառուս ըմբշին յաղթելուց յետոյ 2-րդ ուժ պարտուեց ֆինն Հակոբսեային: Հաւաքականի գլխաւոր մարզիչ Լեւոն Զուլֆալախեանի որդի Արսէնը առաջին խաղակէտում զիջեց 1:2 հաշուով, ապա յաղթեց 3:1 հաշուով եւ գտեմարտը տեղափոխուեց եզրափակիչ 3-րդ խաղակէտ, որում 7:6 հաշուով յաղթեց ֆինն ըմբշը: Ի դէպ, Օգոստոսին երիտասարդների աշխարհի առաջնութիւնում ոսկէ մեդալի արժանացած Զուլֆալախեանը իր մրցակցից փոքր էր 14 տարով:

84 կգ քաշային Դենիս Ֆորովը, որը ներկայացնում է Հայաստանը, առաջին փուլում յաղթելով չեխ մրցակցին՝ յաջողութեան հասաւ նաեւ 2-րդ փուլում եւ մտաւ քառորդ եզրափակիչ, որտեղ հանդիպեց հունգարացի Զոլտան Ֆորդին: Ֆորովը տեխնիկական միաւորների շնորհիւ արագորէն պարտուեց եւ դուրս մնաց յետագայ պայքարից:

96 կգ քաշայինների պայքարում յաջող մենարկած Արման Գեղամեանն էլ պայքարը թողեց՝ 1/8-րդ եզրափակիչում զիջելով իտալացի Դիազորով Տիմոնչին:

ՇԱՆՄԱՏ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՏԱՐԱՒ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԱՆԱԿԸ

Մեքսիկայում անցկացուող շախմատի աշխարհի առաջնութեան չորրորդ տուրում հայաստանցի Լեւոն Արոնեանը տարել է առաջին յաղթանակը՝ սպիտակներով առաւելութեան հասնելով հունգարացի Պետեր Լեկոյի նկատմամբ: Երեւանի ժամանակով կէսգիշերին մօտ սկսուած պարտիան աւարտուել է 45-րդ քայլում:

Մրցաշարային աղիւսակում Արոնեանը ներկայումս 2 միաւորով ռուսաստանցիներ Ալեքսանդր Մորոզեւիչի, Ալեքսանդր Գրիշչուկի եւ իսրայէլցի Բորիս Գելֆանդի հետ կիսում է 3-6-րդ տեղերը:

Աղիւսակը 2,5-ական միաւորով գլխաւորում են Վլադիմիր Կրամնիկը (Ռուսաստան) եւ Վիշուանաթան Անանդը (Հնդկաստան):

Ամենաքիչ՝ 1,5-ական միաւոր են հաւաքել ռուսաստանցի Պյոտր Սվիդլերը եւ Պետեր Լեկոն:

Առաջնութեան պաշտօնական կայքէջի փոխանցմամբ, Երկուշաբթի օրը մրցաշարում ընդմիջում է յայտարարուած:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

ԱՆԳՆՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 6-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Էվրթըն - Մանչեսթըր Եուն. (0-1), Ռուսթ Դամ - Միտլդըրօ (3-0), Փորթսմութ - Լիվըրփուլ (0-0), Սանտըրլէնտ - Ռիտինկ (2-1), Թոթեմհամ - Արսենալ (1-3), Զելսի - Պլէքպըրն (0-0), Ուիկան Աթլ. - Ֆուլհամ (1-1), Մանչեսթըր Ս. - Ասթոն Վիլլա (1-0), Պըրմինգհեմ - Պոլթըն (1-0), Տերափ Քաունթի - Նիւքասլ (1-0)

Table with 6 columns: Team, W, D, L, Goals, Points. Lists teams like Առաջատար խումբերու դասաւորումը, Արսենալ, Մանչեսթըր Սիթի, Լիվըրփուլ, Մանչեսթըր Եուն., Զելսի, Ռուսթ Դամ, Էվրթըն.

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆուտբոլի առաջնութեան 5-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Տորթմունտ - Վարտըր Պոյնըն (3-0), Պ. Լիվըրքուզըն - ՎՖԼ Պոխում (2-0), Նիւրնպըրկ - Դանուբը-96 (2-2), Այնթ. Ֆրանքֆորթ - Դամպուրկ (2-1), Արմ. Պիլըֆէլտ - Ռոսթոք (4-2), Տուիզպուրկ - Դերթա Պերլին (1-2), Շոլթաբաք - Քոթայիս (3-0), Վոլսպուրկ - Քարլսրուե (1-2), Պ. Միւնխի - Շալքե-04 (1-1)

Table with 6 columns: Team, W, D, L, Goals, Points. Lists teams like Առաջատար խումբերու դասաւորումը, Պայերն Միւնխի, Արմ. Պիլըֆէլտ, Այնթ. Ֆրանքֆորթ, Տորթմունտ, Պ. Լիվըրքուզըն, Շալքե-04, Շոլթաբաք.

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուտբոլի առաջնութեան 3-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Սիենա - Ա. Սէ. Միլան (1-1), Լացիո - Էմպոլի (0-0), Փալերմօ - Թորինօ (1-1), Գենովա - Լիվորնօ (1-1), Ռեճինա - Ա. Էս. Ռոմա (0-2), Նափոլի - Սամտորիա (2-0), Եուվենթուս - Ուտինեզէ (0-1), Ինթեր Միլան - Քաթանիա (2-0), Ֆիորենթինա - Աթալանթա (2-2), Փարմա - Քալիարի (1-1)

Table with 6 columns: Team, W, D, L, Goals, Points. Lists teams like Առաջատար խումբերու դասաւորումը, Ա. Էս. Ռոմա, Ինթեր Միլան, Նափոլի, Եուվենթուս, Ա. Սէ. Միլան, Ֆիորենթինա, Աթալանթա.

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան 3-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Աթլէթ. Պիլպասօ - Սարակոսա (0-0), Օսասունա - Պարսելոնա (0-0), Սելիլլա - Դուլչիվա (4-1), Մայորքա - Վիլլաբալ (0-1), Վալենսիա - Ռէալ Վալադոլիտ (2-1), Տեփ. Քորունա - Ռէալ Պաթիս (1-0), Ռէալ Մատրիտ - Ալմերիա (3-1), Էսպանիոլ - Կեթաֆէ (1-0), Ռասինկ - Լեվանթ (1-0), Ռէալ Սուրսիա - Աթլէթ. Մատրիտ (1-1)

Table with 6 columns: Team, W, D, L, Goals, Points. Lists teams like Առաջատար խումբերու դասաւորումը, Ռէալ Մատրիտ, Սելիլլա, Վիլլաբալ, Վալենսիա, Պարսելոնա, Ռէալ Սուրսիա, Ռասինկ.

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան 8-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Մարսել - Թուլուզ (1-2), Օքսէռ - Նիս (2-0), Լը Մանս - Վալանսիէ (2-0), Լանս - Նանսի (0-0), Սէնթ Էթիէն - Քան (3-0), Մոնպօ - Փարիզ Սէն ժերմէն (1-2), Սոչօ - Սթրասպուրկ (0-0), Մէքց - Լիոն (1-5), Լիլ - Պորտօ (1-1), Լորիան - Րընէ (0-1)

Table with 6 columns: Team, W, D, L, Goals, Points. Lists teams like Առաջատար խումբերու դասաւորումը, Նանսի, Լիոն, Պորտօ, Րընէ, Վալանսիէ, Մոնպօ, Լը Մանս.

Subscription form for MASSIS Weekly. Includes fields for Name, Address, City, State, Zip Code, Country, Tel, Fax. Text: 'Yes, I wish to subscribe to Massis Weekly. Enclosed a check for (one year) * \$50,00 for USA * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.'

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒԹՅԱՄ ԴԵՊԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ...

Շարունակում է 6-ին

ները ընդունման որոշումը իր ընդհանուր տարողությունները եւ նաեւ Հայաստանից սփիւռ. քառայ շրջանաւարտների դերը սփիւռ. քառայ թափափաժ յաջողութիւններում եւ նաեւ նրանց պարած երկրներում ձեռք թողած յաջողութիւններում նպաստը եւ ընդհանուր գործունէութիւնները գանազան ասպարէզներում: Անտարակոյս սոյն առաջարկը ներկայացուած է Երեւանում 3-6ը կայանալիք գիտաժողովում:

Վերոյիշեալ պատմական ներածականից յետոյ, անցնինք Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների սփիւռ. քառայ ուսանողների այդ խմբի ընդունման 50-ամեակի գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների կապակցութեամբ:

Առ ի յիշատակութիւն Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, դոկտ. փրոֆ. Արամ Սիմոնեանը մի տարի առաջ ձեռնարկել է 50-ամեակի գիտաժողովի նախապատրաստական աշխատանքներին: Սոյն տողերը գրողը լիազօրուել է Մերձաւոր Արեւելքի երկրներում (Լիբանան, Սիրիա, Յորդանան, Իրաք) Երեւանի պետական համալսարանի շրջանաւարտների շրջանում ծաւալելու գործունէութիւն կապուած Երեւանի պետական համալսարանի առաջին սփիւռ. քառայ ուսանողների ընդունման 50-ամեակի տօնակատարութեան հետ:

50-ամեակի գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների առաջընթացը ընթանում է ինքնուրոյն ուղեգծով, կենդրոնացուել է Երեւանի պետական համալսարանի միջազգային կապերի բաժնում գլխավորութեամբ՝ Ալեկանդր Վիրապեանին: Որտեղ կատարուում է սփիւռ. քառայ շրջանաւարտների ընդհանուր ցանկի ստուգումը, հասցեագրումը եւ առաքումը Միջին Արեւելքի արաբական երկրների, Եւրոպայի, Միացեալ Նահանգների եւ այլ ցամաքամասերում շուրջ 27 երկրներում գտնուող գաղթահայ օճախներից Հայաստանից սփիւռ. քառայ շրջանաւարտներին:

Գիտաժողովը կը կայանայ պետական համալսարանում 2007 թ. Հոկտեմբերի 3-6ը: Բացման եւ փակման արարողութիւնը Երեւանի պետական համալսարանում:

Շրջանաւարտները հնարաւորութիւն կ'ունենան հանդիպելու եւ քննարկումների մասնակցելու իրենց մասնագիտական բուհերում:

Հանդիպումներին մասնակցութիւն կ'ունենայ նաեւ ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան նախարար պրն. Լեւոն Մկրտիչեանը:

ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան սփիւռ. քառայ բաժնից պարոններ Հրաչ Թադէոսեանն ու Նորայր Անդրէյեանը օգտաշատ նպաստ բերեցին գիտաժողովի նախապատրաստական աշխատանքների համադրումին եւ դասաւորմանը:

Երեւանի պետական համալսարանի միջազգային կապերի բաժնում լինելու անձնակազմը, արդէն պատրաստել է գիտաժողովին աշխատանքային ծրագիր:

Գիտաժողովի նախապատրաստական աշխատանքներին մասնակցում են նաեւ սփիւռ. քառայ շրջանաւարտների միութեան վարչութիւնները յատկապէս Սիրիայում, Լիբանանում եւ Միացեալ Նահանգներում:

Գնահատելի աշխատանք է կատարուում գիտաժողովի նախաձեռնողներից Լիբանանում Սփիւռ. քառայ շրջանաւարտների Միութեան վարչութեան խորհրդական Տոքթ. Պօղոս Ժիրայր Կարապետեանը 50-ամեակի գիտաժողովի նախապատրաստական ընդհանուր աշխատանքներին կապ հաստատելով սփիւռ. քառայ գաղթահայ օճախների շրջանաւարտների հետ, իսկապէս արդիւնաւէտ աշխատանք կատարելով:

Պատմական նշանակութիւն ունեցող գիտաժողովին յաջողութեան գրաւականը հանդիսանում է շրջանաւարտների պատկանելի տոկոսով մասնակցութեամբ: Մեկնելով այս իրողութիւնից իւրաքանչիւր շրջանաւարտ սփիւռ. քառայ գաղթահայ օճախում ալ գտնուի, ինչպիսի դժուարին պայմաններով ալ շրջապատուած լինի ինքզինք պարտաւորուած զգայ բոլոր գոհողութիւններում եւ յաղթահարելով արգելքները ցանկութիւն ունենայ մասնակցել 50-ամեակի ոսկէ յոբելեանին, պատմական գիտաժողովին: Հայրենիք-սփիւռ. քառայ կրթական կամուրջը առաւել զօրացման եւ զարգացման:

Միասնական համախմբուածութեամբ դէպի գիտաժողով:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐ ՕՁՆԵՑԻ ԵՒ ԻՐ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ԿՅՈՑ» ՕՐԻՆԱԳԻՐՔԸ

Շարունակում է 13-ին

ըր վերել յիշուած Շահապիվանի 20 կանոններն են եղած, Շահապիվանի 444 թուականին գումարուած, ինչպէս յիշեցինք վերը: Վազգէն Յակոբեան իր Ներածականին մէջ կարեւոր էջեր տրամադրած է Շահապիվանի ժողովի կանոններուն, նկատելով որ Հայ Եկեղեցւոյ իրաւական եւ կանոններու կարգաւորման պատմութեան մէջ անիկա առաջին ժողովն է եղած ուր յանցագործներու շարքին կ'անցնին թէ՛ կրօնական եւ թէ՛ աշխարհական անձինք, ազատներ եւ շինականներ, որոնց դատն ու պատիժներու սահմանումը հաւասարապէս կը յանձնուէր եկեղեցական իշխանութեան, մասնաւորապէս նկատի ունենալով 5-րդ դարու Սասանեան Պարսկաստանի ոտնձգութիւնները:

Նման ծանր պայմաններու ներքեւ Շահապիվանի ժողովը կը գումարուէր, որուն սահմանած այժմէական կանոնները 8-րդ դարուն մտան Յովհաննէս Օճնեցիի կանոնագիրքին մէջ: Աւելի ուշ, 12-րդ դարուն, Մխիթար Գօշի «Դատաստանագիրք»-ին մէջ մտան Շահապիվանի կանոններէն հաւասարապէս «եկեղեցական կանոններ» եւ «աշխարհիկ օրէնքները», որոնց մէջ 8-րդ կանոնը մահապատիժ կը սահմանէր «կախարդութեան» եւ «հաւատաւորացութեան» յանցանքներու պարագային, օրուն վտանգը աչքի առնելու ունենալով, երբ զրադաշտական կրօնը կը պարտադրուէր հայոց: Շահապիվանի վերջին երկու կանոնները Մծղնէական աղանդին յարող մարդկանց կը վերաբերէին, որոնք կը մերժէին Հայ Եկեղեցւոյ ձեռնադրեալ պաշտօնականներն ու ծէսը: Անոնք դաժան պատիժի կ'ենթարկուէին նոյն կանոններու գործադրութեամբ:

Երկրորդ Հատորը - Դուինի Բ Ժողովը

Վազգէն Յակոբեանի աշխատասիրութեան Բ Հատորը, հրատարակուած 1971 թուին, կը բովանդակէ 33 կանոնախումբեր, որոնց կար-

գին կը գտնուի 648 թուականի Դուինի Բ ժողովին որդեգրուած 12 կանոնները, որոնք սակայն չեն ամփոփուած 8-րդ դարու Օճնեցի Հայրապետի կանոնագիրքին մէջ: Դուինի ժողովի կանոնները արաբական արշաւանքներու եւ հայ նախարարներու դիմադրութեան հետեւանքով խմբագրուած են Ներսէս Գ Տայեցիի (Շինող) կաթողիկոսի նախագահութեանը ներքեւ, որուն մասնակցեցան հայ իշխաններն ու Հայաստանի 17 եպիսկոպոսները: Ժողովի գումարումն ու աւելուած որոշումները նկատի ունէին այն ժամանակներու թէ՛ բիւզանդական ճշուրմները հայոց վրայ, եւ թէ՛ Բիւզանդիոնի եւ Արաբներու միջեւ եղած ձգտելով վիճակը, որմէ օգտուելով Բիւզանդիոն Հայ Եկեղեցւոյ վրայ Քաղկեդոնի ժողովը պարտադրելու յետին միտքը ունէր:

Ինչպէս պատմութեան գիտենք, Հայոց Եզր Կաթողիկոսի օրով դէպի Քաղկեդոն մերձեցման այդ փորձը առժամաբար որոշ յաջողութիւն պիտի գտնէր, եւ սակայն Ներսէս Կաթողիկոսի օրով, եւ Դուինի Բ ժողովի կանոններու ուժով նման առաջարկ մը պիտի մերժուէր: Դուինի յիշեալ 12 կանոններուն մէկ մասը ժառանգական, շարժական ու անշարժ կարուածներու յատուկ էին, ինչպէս նաեւ զաւակներ որդեգրելու, ամուսնալուծման, տուգանքներու եւ այլ ընկերային խնդիրներու յատուկ էին, ինչպէս քննած է Վազգէն Յակոբեան իր Բ հատորի 220-215 էջերուն մէջ:

Ամփոփում Կանոնախումբերու

Շատ կենսական մեր այս գոյզ հատորները կը պարունակեն Հայոց կանոնագիրքի 8-րդ, 10-րդ, եւ 11-րդ դարերու ինքնագրութիւնները, ընդամենը 57 կանոնախումբերով, 24-ը առաջին, եւ 33-ը երկրորդ հատորներուն մէջ, ընդամենը 1332 առանձին կանոններով: Այս հաշուարկման մասին տեսնել Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատոր 5, էջ 240:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 80-ԱՄԵԱԿ

Շարունակում է 7-ին

Գերշ. Պրուսո Եպիսկոպոս: Ան դրուատեց երկու եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող եղբայրական սերտ փոխ յարաբերութիւնները եւ այդ գծով Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ունեցած օգտակար ներդրումը: Պրուսո սրբազան անդրադառնալով հայ ժողովուրդի անցեալի պատմութեան՝ դատապարտեց եղած անարդարութիւններն ու գործադրուած ցեղասպանութիւնը:

Իր պատասխան ելոյթին մէջ Արեւմտեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. իր սրտագին շնորհակալութիւնները յայտնեց Անկլիկան եկեղեցւոյ առաջնորդ Գերշ. Պրուսո Եպիսկոպոսին իր այս պատմական նախաձեռնութեան եւ ջերմ ընդունելութեան համար: Ան գնահատեց գոյզ եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող օրինակելի փոխ յարաբերութիւնները: Յովնան սրբազան առանձնապէս

դրուատեց նաեւ Անկլիկան եկեղեցւոյ տարած ճիգերը հայոց ցեղասպանութեան ճանաչման գծով: Ապա որպէս յիշատակ այս պատմական հանդիպումին հայկական լայնախաչ մը նուիրեց Պրուսո Եպիսկոպոսին, արժանանալով երկարատեւ ծափահարութեանց:

Եկեղեցւոյ մէջ ուշադրաւ ներկայութիւն մը եղաւ Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ միացեալ երզնախումբը, որուն կատարած հոգեւոր երգերը քառաձայն երգեցողութեամբ, դեկավարութեամբ Արա Տէմիրէլի խորապէս տպաւորեցին բոլոր ներկաները:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ շքեղ հիւրասիրութիւն, յատկապէս այս առիթին համար եկեղեցւոյ բակին մէջ զետեղուած ընդարձակ վրանին ներքեւ:

Իսկապէս պատմական բացառիկ ձեռնարկ մըն էր, անթերի կազմակերպութեամբ որուն համար շնորհաւորելի են նախաձեռնողները:

ԱՍՈՒՍՆԱՅԵԱԼՔ

ՅՈՒԼԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԸՆԴ Դ ՄՈՆԻԹՐԱ ԶՊՊԱՆԵԱՆ
Ուրբաթ, 14 Սեպտեմբեր, 2007 Լոս Անձելոս

Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու սրտաբուխ բարեմաղթութիւնները նորապսակ գոյգին եւ անոնց ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ «Մասիս»-ի գլխաւոր խմբագիր Տօքթ. եւ Տիկ. Արշակ եւ Վարդուհի Գազանձեաններուն:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՀԵՌՈՒՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԴԻՊ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:00

Կլենտլի 26-րդ կայանից

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

ARMENIAN INDEPENDENCE DAY

FESTIVAL

**SUNDAY, SEPTEMBER 23, 2007
VERDUGO PARK, GLENDALE
11:00AM - 7:00 PM**



WIN RAFFLE



KIA 2007 OPTIMA LX

\$10

FREE ADMISSION
* * * * *
ՄԱՐՊԱՊՈՐՈՆ ԱՉԱՍ

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ
ԳԻՐԲԵՐՈՒ ՎԱՃԱՌԲ
ՓՈԲՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՆԱՐՏԻ ՄՐՅԱՇԱՐԲ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

Catering by
**MOON MART
KABAB**



Ատիս • Սազո • Ժօզէֆ Գրիգորեան
Սամուէլ Սահակեան • Արսէն Ալոեան
Յարութ Յակոբեան • Հրաչ Պողարեան
Մերուժան Մարգարեան • Լիլիա Պարախունք

 KIA GLENDALE KIA	 STACY ADAMS COLLECTION	 Commerce Casino THE WORLD'S LARGEST POKER CASINO	REMEDY PHARMACY
 Glendale West Pharmacy and Medical Supply	 ԹԱՄԱՐԱ TAMARA	GLENDALE MEDICAL PHARMACY	APOLITANO GRAPESSEED OIL
 AMGA Armenia Media Group of America	26 Channel	GOLDEN FARMS MARKET	